Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

28(318)
29.09.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐ

Ղեկավարվելով ԼՂՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Նախագահ Բակո Սահակյանը սեպտեմբերի 22-ին ստորագրել է հրամանագիր հանրապետության կառավարության անդամներ նշանակելու մասին: Հրամանագրի համաձայն, ԼՂՀ կրթության և գիտության նախարար է նշանակվել Սլավիկ Արմիկի Ասրյանը:

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԼԱՎԻԿ ԱՐՄԻԿԻ ԱՍՐՅԱՆ

Ծնվել է 1949թ. դեկտեմբերի 25-ին, ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մոխրենես գյուղում, ուսուցչի ընտանիքում: 1950 թվականին ընտանիքի հետ տեղափոխվել է նույն շրջանի Թաղուտ գյուղ, որտեղ ավարտել է ութամյա դպրոցը: Նույն տարում ուսումը շարունակել է Տողի միջնակարգ դպրոցում և ավարտել այն 1966 թվականին: 1966 թվականին ընդունվել է Ադրբեջանի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը և 1970թ. ավարտել՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 1970թ. աշխատանքի է անցել Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1971թ. մայիսի 14-ից ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերի շարքերում: Ծառայությունից հետո աշխատանքի է անցել Ստեփանակերտի հ. 5 երկարօրյա դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1977թ. սեպտեմբերի 1-ից տեղափոխվել է Ստեփանակերտի հ. 1 միջնակարգ դպրոց՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ, իսկ այնուհետև՝ որպես դպրոցի տնօրենի տեղակալ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով: 1990-1993թթ. օգոստոսի 24-ից աշխատել է քաղգործկոմի կրթության բաժնի վարիչի տեղակալի պաշտոնում, այնուհետև տեղափոխվել և նշանակվել է ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության կրթության վարչության պետի պաշտոնում: 1997 թվականից առայսօր աշխատել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարի տեղակալի պաշտոնում:

ԼՂՀ Նախագահի 2012թ. սեպտեմբերի 22-ի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ կրթության և գիտության նախարար:

1986թ. օգոստոսի 20-ին պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» ԽՍՀՄ մեդալով:

2009թ. հոկտեմբերի 3-ի ԼՂՀ նախագահի հրամանագրով արժանացել է «ԼՂՀ վաստակավոր մանկավարժ» կոչման:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Սեպտեմբերի 24-ին վարչապետ Արա Հարությունյանը կրթության և գիտության բնագավառի աշխատողներին է ներկայացրել նախագահական հրամանագրով ԼՂՀ կրթության և գիտության նախարար նշանակված Սլավիկ Ասրյանին:

Հանդիպման ընթացքում, որտեղ շնորհակալական ու բարեմաղթանքի խոսքեր են հնչել, խոսվել է ինչպես կատարված աշխատանքի, այնպես էլ առաջիկա անելիքների մասին: Անցած հինգ տարիները ոլորտում բարեփոխումների տարիներ էին: Զգալիորեն ավելացել է կրթության բնագավառի ֆինանսավորումը, փոխվել է վերաբերմունքը կրթության բոլոր օղակների նկատմամբ, սկսվել են բարեփոխումները, որ այնքան էլ միանշանակ վերաբերմունք չեն գտել հասարակության շրջանում և այդ իսկ պատճառով որոշակիորեն հետաձգվել են: ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի խոսքով՝ «Դադարը հնարավորություն կտա անցումը կատարել առանց ցնցումների, և ինչքան հնարավոր է, շուտ քաղել բարեփոխումների պտուղները»:

Այդ խնդիրն է դրված կրթության և գիտության նախարարության ղեկավարության և ոլորտի աշխատողների առջև: Ապագան գիտությամբ հզորացած տնտեսությանն է, և Արցախում այսօր կատարվող քայլերի արդյունքը երկրի հասարակական ու տնտեսական կյանքում պիտի զգացվի շուրջ 15 տարի անց: Այդ բարեփոխումները նախաձեռնողների կարծիքով նոր նախարար՝ բազմափորձ պետական պաշտոնյա Սլավիկ Ասրյանը, ով արդեն տասնհինգ տարի զբաղեցնում է կրթության և գիտության փոխնախարարի պաշտոնը, կկարողանա կատարել առաջադրանքը:

Կրթության և գիտության արդեն նախկին նախարար Վլադիկ Խաչատրյանը 2007 թվականին ձևավորված կառավարության ամենաերկարակյաց նախարարներից մեկն էր, պաշտոնավարել է ուղիղ հինգ տարի, անցել է նոր աշխատանքի. նա ղեկավարելու է Մարտակերտի շրջվարչակազմը:

Սեփ. լրատվություն

ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Ո՞վ, սկսած մանկությունից, երբևէ նայելով աստղազարդ երկնքին, չի ցանկացել ճանաչել նրանց, գտնել ամենամեծ աստղը, պատկերներ կազմել աստղերի խմբից, ուրախացել՝ տեսնելով իմացած համաստեղությունները, ամենառոմանտիկ լուսատուի՝ լուսնի հետ թաքուն երազանքներ փայփայել, չի երազել տիեզերք ընկնելու մասին…

Նրանք, ովքեր սեպտեմբերի 16-ին ներկա էին ԼՂՀ Ազգային ժողովի շենքում կազմակերպված միջոցառմանը, նման շատ հարցերի պատասխան էին ուզում լսել այնտեղ ներկա գտնվող տիեզերագնացներ՝ ամերիկացի Չարլզ Դյուկից, Շվեյցարիայի Լոզանի համալսարանի դոկտոր Կլոդ Նիկոլյեից և Կանադայի կղզիներից մեր հայրենակից՝ դոկտոր, պրոֆեսոր, Եվրոպական աստղաֆիզիկական գիտական կենտրոնի աշխատակից Գարիկ Իսրայելյանի հետ հանդիպման ժամանակ, որոնք զեկուցումներով հանդես եկան ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ու Արցախի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Մարդը և տիեզերքը» թեմայով գիտաժողովում՝ նվիրված Լուսնի վրա առաջին անգամ ոտք դրած մարդու՝ Նիլ Արմսթրոնգի հիշատակին: Նրանք երեքն էլ առնչվել են լեգենդար տիեզերագնացին:

Միջոցառումը վարում էր ԱրՊՀ ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ալբերտ Ալեքսանյանը, որն էլ ներկայացրեց օրվա հերոսին և հյուրերին:

ԱՄՆ աստղագնաց, տիեզերական ինժեներ, ռազմածովային օդաչու Նիլ Արմսթրոնգն առաջին տիեզերագնացն էր, ով 1969թ. հուլիսի 21-ին «Ապոլոն-11» տիեզերանավով ոտք դրեց Լուսնի վրա՝ ասելով հետևյալ պատմական խոսքերը. «Դա մի փոքր քայլ է մարդու համար, սակայն՝ հսկա թռիչք մարդկության համար»: Նա վախճանվեց բոլորովին վերջերս՝ օգոստոսի 25-ին, 82 տարեկան հասակում: Մարդու վայրէջքը Լուսին՝ մարդկության պատմության ամենամեծ իրադարձություններից մեկն էր: Օրեր առաջ Արմսթրոնգի աճյունը հանձնեցին Ատլանտյան օվկիանոսին: Արմսթրոնգը երկար տարիներ ծառայել է նաև ամերիկյան նավատորմում, որի կանոնադրությամբ սահմանված է աճյունը հանձնել օվկիանոսին: Եվ ահա Արցախում կազմակերպվեց Արմսթրոնգին նվիրված՝ աշխարհում առաջին գիտաժողովը, որին մասնակցում էին, ինչպես նշեցինք, նրա ընկերները՝ տիեզերագնացներ Չարլզ Դյուկը և Կլոդ Նիկոլյեն:

Գիտաժողովի մասնակիցները հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգեցին Նիլ Արմսթրոնգի հիշատակը:

Բացման խոսքում Գ. Իսայարելյանն ասաց. «Անշուշտ, մեզ համար մեծ պատիվ է նման գիտաժողով անցկացնել, որին թեպետ չեն մասնակցում Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, հարյուրավոր գիտնականներ և այլն, բայց դա չէ կարևորը, այլ այն, որ թեկուզ փոքր խմբով, այն անցկացվում է շատ փոքր երկրում, մի վայրում, որը համարվում է քրիստոնեության օջախ, մի երկրում, որտեղ քրիստոնեական արժեքներն առաջին տեղում են»: Ի դեպ՝ Արմսթրոնգն անցյալ տարի մասնակցություն ունեցավ Գարիկ Իսրայելյանի հիմնադրած «Սթարմուս» գիտական փառատոնին, որը նվիրված էր Յուրի Գագարինին: Գ. Իսրայելյանն ասաց, որ Արցախում կազմակերպված գիտաժողովին մասնակցելու իր համաձայնությունն էր տվել նաև տիեզերագնաց Ալեքսեյ Լեոնովը, սակայն ինչ-ինչ պատճառներով չէր կարողացել ներկայանալ:

Շնորհակալություն հայտնելով հյուրերին՝ Արցախ այցելելու համար, Գ. Իսրայելյանն ասաց, որ դա պայմանավորված է ոչ միայն գիտական հետաքրքրություններով, այլև հայ ժողովրդի նկատմամբ ունեցած հարգանքով ու ակնածանքով:

Հրապարակվեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի ուղերձը, որում ասվում է.

«Գիտաժողովի հարգելի մասնակիցներ

Ուրախ եմ ողջունել բոլորիդ և իմ գոհունակությունը հայտնել Արցախում նման կարևոր միջոցառման անցկացման կապակցությամբ: Հայկական լեռնաշխարհը հանդիսանում է տիեզերքի ուսումնասիրման երկրագնդի ամենահին վայրերից մեկը, ինչի մասին են վկայում այստեղ առկա հինավուրց աստղադիտարանները: Ոլորտը մեծ զարգացում է ապրել նաև 20-րդ դարում, որը կարելի է համարել հայ աստղագիտության ոսկեդարը: Տիեզերքի ուսումնասիրման գործում շոշափելի է նաև ծնունդով արցախցի գիտնականների ներդրումը, ինչը մեծ հպարտություն է ներշնչում մեզ բոլորիս:

Այդ իսկ պատճառով մենք չափազանց կարևորում ենք տիեզերքի ուսումնասիրմանը նվիրված գիտական միջոցառումների անցկացումը մեր երկրում, հատկապես անվանի մասնագետների մասնակցությամբ: Համոզված եմ, որ «Մարդը և տիեզերքը» գիտագործնական գիտաժողովը հաջողությամբ կիրականացնի իր առջև դրված խնդիրները և կխթանի տիեզերքի ուսումնասիրման հանդեպ հետաքրքրությունը մեր հանրապետությունում:

☞3

ՕՐԱԳԻՐ

...ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ՇԵՆԱՆՈՒՄ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐԸ

Հայրենիքի շենացումը համայն հայության իղձերի առհավատչյան է, մեր բոլորիս լուսավոր երազանքների իրականացումը, հայրենի բնօրրանի ամեն մի գողտրիկ անկյունի վերակենդանացումը, հայոց աշխարհի համընդհանուր վերածնունդը...

Հայոց ամեն մի ոստանի ապաքինումը մեր հավաքական ուժի արտացոլումն է: Այդ են վկայում օր օրի շենացող մեր գյուղերն ու ավանները, մեր հինավուրց երկրի պատմական կոթողների վերաօծումն ու մեր բոլոր այն բնակավայրերի, դպրության օջախների վերակենդանացումը, որոնք մեր հարատևության գրավականն են, որոնցից ամեն մեկի պատմությունը վառ վկայությունն է հայոց աշխարհի անընդմեջ պայքարի ու ազատագրական ոգու, որի շնորհիվ ունենք անկախ ու վերակերտվող հայրենիք: Հայրենիք՝ ասել է թե սրբոց մի անկյուն մեծ երկրագնդի, որը մարդու էության ու ներաշխարհի ողջ պարունակությունն է: Թերևս սրանով է պայմանավորված այն իրողությունը, որ աշխարհի որ ծագում էլ ապրելիս լինի հայը, մտորում է իր հայրենի ոստանը շենացնելու մասին: Հենց այս հզոր մղումով հայությունը դառնում է միաձույլ՝ ներդնելով կարողություններն ու հոգու տենչերը՝ ստույգ գիտակցելով, որ օտար երկիրը հայրենիք չի դառնա, ինչքան էլ որ լինի նպաստավոր ու բարգավաճ:

Հենց այսպիսի նպատակայնությամբ «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնած ծրագրով Շուշիի ազատագրության 20-րդ տարում ավարտին հասցվեցին հիմնանորոգման աշխատանքները հերոսական բարձունքի մի մեծ կրթօջախում՝ Խ. Աբովյանի անվան դպրոցում, որի վավերագրությունն ու դիմակայությունը կապված են Շուշիի՝ այդ վեհանիստ բարձունքի ազատագրության հետ: Ունենալով ավելի քան կեսդարյա պատմություն՝ կրթօջախը ևս անցել է իր պայքարի ուղին և այժմ՝ բռնագաղթից հետո, մայր կրթօջախ վերադառնալու նախօրյակին՝ սեպտեմբերի 8-ին, մեծ շուքով ու հանդիսավորությամբ մեկնարկեց նոր ուսումնականը՝ ազդարարելով ի լուր հայության, որ հայոց բերդաքաղաքում շենացել է դպրության մի օջախ, որի զինանոցում թրծվելու են ապագայի մշակներ, և ինչու չէ, նաև մեծ բարերարներ:

Տոնախմբությունը, որ հաջորդել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի նախագահական երդմնակալությանը, եզակի էր իր բնույթով: Թերևս սա նման էր այն խանդավառ իրադարձությանը, երբ հայոց հոգևոր թագավորանիստ կենտրոնում՝ Վաղարշապատում, 405թ. ողջ ժողովուրդը Վռամշապուհ թագավորի և Սահակ Պարթև կաթողիկոսի գլխավորությամբ հավաքվել էր քաղաքի գլխավոր մուտքի մոտ՝ դիմավորելու հայերեն գրերի ստեղծողին՝ մեծ ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցին: Խանդավառությունը և մթնոլորտը նույնն էին, միայն թե այս պարագայում հիմնանորոգ և հարմարավետ կրթօջախի առջև ողջ կրթարանը և բոլոր հրավիրյալները հավաքվել էին դիմավորելու հայոց երկու հանրապետությունների նախագահներին և պետական այրերին, որոնց հանդիսապետությամբ սկսվեց բացման հանդիսավոր արարողությունը: Զեկուցումով հանդես եկավ դպրոցի տնօրեն Նազիկ Նալբանդյանը:

Կարևորելով ուսման դերը՝ նա միաժամանակ նշեց մեր երկրի կառուցողական և հայ բարերարների ազգանվեր գործունեությունը, որոնց ջանքերով ունենք հիմնանորոգ դպրոց: Սրան հաջորդեց ԿԳ նախարար (նախկին) Վ. Խաչատրյանի ուշագրավ ելույթը, որը հագեցած էր հայրենասիրական շնչով: Այնուհետև խոսքը տրվեց հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանին. որը հայտնեց, որ հիմնանորոգման աշխատանքներն իրականացվել են Ռուսաստանի հայ բարերարների միջոցով:

Վերջապես ասպարեզը տրամադրվում է դպրոցի սաներին, որոնք իրենց խորին երախտագիտությունն են հայտնում մեր իշխանություններին, բարերարներին և շինարարներին այդպիսի մեծ հոգածության համար՝ գոհունակության արժանանալով ներկաների կողմից: Սկսվում է օրհնության արարողությունը Շուշիի հոգևոր հովիվ Տեր Անդրեաս քահանայի կողմից: Այնուհետև մուտքի բացման ժապավենը կտրելու պատիվը տրվում է Ա. Վարդանյանին և Ն. Նալբանդյանին, և կատարված ողջ ջանադիր աշխատանքը ներկայացվում է հավաքվածների ուշադրությանը: Շրջայցից հետո, երբ նախագահական խումբը դուրս եկավ դպրոցից, ականատես եղավ տոնական այնպիսի մեծ խանդավառ տեսարանի, որից թնդում էր ողջ հրապարակն ու Շուշին, որն էլ ինձ հիշեցրեց վաղարշապատյան տոնախմբությունը 15 դար առաջ:

Ահա թե ինչպես են հայրենանվեր գործերը շենացնում հայրենի երկիրը, որոնց շնորհիվ մեկը մյուսի հետևից վեր են հառնում կենսականորեն անհրաժեշտ բազմաթիվ շինություններ, առավել ևս, կրթական օջախներ, և դպրությունը հարատևում է՝ սերնդեսերունդ կրթելով իր սաներին, որոնք էլ դառնում են հայրենի երկրին սատարողներ, վերակերտման հզոր սյուներ ու նվիրյալներ, Մեծ սերմնացաններ ու շինարարներ...

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվ. հիմն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Դարերի ընթացքում հասարակության կողմից ստեղծված մշակութային արժեքներից կարևորագույնը կրթօջախն է, որը դարերի համար սերունդներ է դաստիարակում, հերթափոխ պատրաստում: Այդ նկատառումով էլ կրթական համակարգը գտնվում է մեր պետության ուշադրության կենտրոնում, նրա հոգածության տակ, որի համար անչափ գոհ ենք ու շնորհակալ:

Հուրախություն մեզ, «Հայաստան» համահայկական հիմնադրամն ի սկզբանե նեցուկ լինելով հայոց պետականությանը, 20 տարուց ավելի է՝ շարունակում է իր առաքելությունը հայրենիքում և մեծ հեղինակություն վայելում մեր ժողովրդի մեջ: Այդ հեղինակությունը նա վաստակել է իր շնորհակալ աշխատանքով, ինչպես նաև իրականացված արդիական ու սպասված կենսանորոգ ծրագրերի ծավալով ու որակով: Ծրագրեր, որոնք միտված են հայրենիքի շենացմանը, հայրենի հողի վերքերի ապաքինմանը:

Հիմնադրամը նախ և առաջ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության դրսևորումներից է և ապա՝ ազգային տուրք:

Փառք Տիրոջը, նրան հաջողվում է հայրենիքի վերականգնման ընդհանուր նպատակի շուրջ համախմբել աշխարհասփյուռ մեր ժողովրդին, հանգանակությանը մասնակից անել այլազգի մեր բարեկամներին:

Ազգային տուրքի միջոցներով հայրենիքում կառուցվում, վերակառուցվում, վերանորոգվում են կրթության ու մշակույթի օջախներ, բուժհիմնարկներ, ռազմավարական նշանակության ճանապարհներ, իրականացվում գիտական, կրթական, մշակութային, մարդասիրական ծրագրեր, որակյալ կահույքով կահավորվում դպրոցներ, մանկապարտեզներ, բուժհիմնարկներ, մշակույթի օջախներ:

Ահա այսպես միասնական ուժերով, համախմբված, անընդհատ ամրապնդելով մեր եռամիասնությունը, մենք կկարողանանք կյանքի կոչել մեր համազգային ծրագրերը, մեր ժողովրդի դարավոր երազանքները՝ նորանոր հաջողություններ ու հաղթանակներ արձանագրելով: Այո, հայրենին միայն ոգեղեն կանչ չէ, հայրենասիրությունը միայն հայրենիքի նկատմամբ սերը չէ, դա անհամեմատ ավելին է, դա հայրենիքից իր անբաժանելիության գիտակցումն է, ուրախ ու տխուր օրերը նրա հետ միասին անբաժանելիորեն վերապրելը:

Միշտ պետք է հիշել մեր ազգային-ազատագրական պայքարը խորհրդանշող, հայ ժողովրդի պատմության մեծակառույց կոթող զորավար Անդրանիկի պատգամը. «Երբ գլուխներդ կդնեք բարձին քնելու, մի պահ մտածեք, թե ինչ եք արել այսօր ձեր ազգի համար»:

Հիմնադրամի միջոցներով է վերանորոգվել և կահավորվել մեր դպրոցը, որի համար մեր երախտագիտության խոսքն ենք ուղղում մեր իշխանություններին՝ ծրագիրը նախաձեռնելու, «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ֆինանսավորելու, «Ատրիում» շինարարական կազմակերպությանը՝ ծրագիրը կյանքի կոչելու համար: Նոր շունչ ու ոգի ստացած մեր դպրոցը, արդի չափանիշներին համապատասխան նրա պայմանները խթան կհանդիսանան ուսման որակի բարձրացմանը, գիտակցական կարգապահության ամրապնդմանը: Մեր խնդիրն է պահել ու պահպանել այն, աշխատել համարժեք նվիրումով:

Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվ. հիմն. դպրոցի տնօրեն

ԲԱՑ ԴՌՆԵՐԻ ՕՐ

Սեպտեմբերը տիրոջ իրավունքով մտավ Արցախ լեռնաշխարհ: Երեխաները դեռ չէին հագեցել Գիտելիքի օրվան նվիրված տոնական միջոցառումներից, առաջին զանգի ղողանջներից, երբ մայրաբար ձեռքերը պարզեց բոլորի համար սիրելի Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնն իր բազմապրոֆիլ խմբակներով: Ինչքան հաճելի է մտածել, որ նախկին անշուք կիսակառույցը վերածվել է ճարտարապետական գեղեցիկ հանգուցալուծումներով հարմարավետ կենտրոնի: Կրկնակի ես հպարտանում, որ այն տրամադրվել է հենց երեխաներին, ովքեր զարգացնում են իրենց ստեղծագործական հմտություններն ու ունակությունները՝ մասնակցելով տարբեր խմբակների… Նրանց հետ պարապում են արհեստավարժ, զգայուն ու փորձառու խմբակավարներ: Մանկավարժական առումով երեխաների համար խմբակների պարապմունքներին հաճախելը յուրօրինակ լիցքաթափման միջոց է: Երեխան, մտնելով գեղեցիկի աշխարհ, իր տեսանկյունից է ընկալում կյանքը, սովորում գեղեցիկը հաստատելու համար սեփական ներդրումն ունենալ, միաժամանակ նախապատրաստվում հասարակական կյանքին: Դա ևս ինքնահաստատման հասնելու դյուրին ճանապարհ է:

Այդ օրը (սեպտեմբերի 12) Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի բակում տոնական աշխուժություն էր: Հանդեսին մասնակցում էին կենտրոնի շրջանավարտներ, սաներ, ուսուցիչներ, ծնողներ, հյուրեր: Տոնականորեն զարդարված սեղանիկներից յուրաքանչյուրը մատնանշում էր խմբակի անունը՝ կար ու ձևի, ասեղնագործության, մեքենայով ասեղնագործության, հագուստի մոդելավորման, հյուսվածքագործության, հուլունքագործության, ժանյակագործության, մաքրամեի, կարպետի, փափուկ խաղալիքի, երգչախմբի, ռադիոտեխնիկայի, էլեկտրատեխնիկայի, ավտոմոդելավորման, փայտամշակման, ասմունքի և այլն:

Հնչում են ֆանֆարները. կենտրոնի 4-րդ հարկից (կարծես երկնային թագավորությունից) ներքև են թափվում գունավոր փուչիկներն ու փայլերը: Հնչում է «Ղարաբաղ» երգը, որը կատարեցին կենտրոնի վոկալ ստուդիայի (ղեկ.՝ Ա. Գաբուզյան) սաները: Բացելով հանդեսը՝ հաղորդավարը (կենտրոնի սան) շնորհավորեց բոլորին նոր՝ 2012-2013 ուսումնական տարվա կապակցությամբ՝ մաղթելով ստեղծագործական հաջողություններ:

Կայացավ կենտրոնի ավանդական միջոցառման բացումը, որը կրում էր «Բաց դռների օր» վերտառությունը: Հաղորդավարը հրավիրեց երեխաներին գրանցվել և ակտիվորեն մասնակցել գործող խմբակներին, միևնույն ժամանակ հավաստիացրեց, որ նրանց ընդունակություններն ու հմտությունները կզարգանան, կկատարելագործվեն բազմահմուտ ու հոգատար խմբակավարների կողմից:

Շնորհավորական խոսք ասաց ՄՊՍԿ տնօրեն Լյուդմիլա Բարսեղյանը, ով հպարտությամբ նշեց, որ Հայաստանում կազմակերպված «Նռան հատիկ» թատերական փառատոնում կենտրոնի թատերական ստուդիան լավագույնն է ճանաչվել և հրավեր ստացել մասնակցելու միջազգային թատերական փառատոնին, որը կկայանա աշնանը: Սույն թվականի ապրիլին Գյումրի քաղաքում նրանք մասնակցել են «Վերածնունդ» միջազգային 4-րդ մրցույթ-փառատոնին, որտեղ մասնակցություն են ունեցել 1200 երգիչ-կատարողներ 22 երկրներից, այդ թվում՝ Իսպանիայից, Իտալիայից, Հունաստանից, Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից, Բուլղարիայից, Էստոնիայից, Լիտվայից, Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից, Հայաստանից: Միջազգային պատվավոր այդ մրցույթում կենտրոնի վոկալ ստուդիան զբաղեցրել է երրորդ մրցանակային տեղը, իսկ Անի Սաղյանը նույն միջազգային փառատոնի ջազային մրցույթում՝ 5-րդ տեղը: Մրցանակային տեղեր զբաղեցրած սաները պարգևատրվեցին պատվոգրերով ու մեդալներով: 102 շրջանավարտներ ստացան վկայականներ:

Ցանկացած միջոցառում կարծես պետք է սրբագործվի ավանդական «Քոչարի» պարով: Պարարվեստի խմբի սաներն այն կատարեցին բարձր մակարդակով: Նրանց միացան անգամ հարակից կամրջին կանգնած արտասահմանցիները (երևի հայկական բոլոր պարերը մոգական ազդեցություն ունեն): Օտարերկրացիները նկարահանում էին մեր երեխաների ելույթները, որպեսզի իրենց երկրում ցույց տան արցախցու ոգու և կամքի հարատևության գաղտնիքը: Սաները մեծ ոգևորությամբ երգում էին ոչ միայն հայրենական, այլև արտասահմանյան հանրահռչակ երգահանների ստեղծագործությունները: Դրանք ընդմիջվում էին «Կարմիր, կապույտ, նարնջագույն» հանրահայտ ստեղծագործությամբ (ղեկ.՝ Գայանե Հարությունյան):

Վոկալ խմբի սան Անդրանիկ Վերդյանի հնչեցրած «Հայաստան» երգը ցնցեց բոլորին (ղեկ.՝ Էվելինա Ստեփանյան):

«Բաց դռների օր» տոնը կայացել էր: Մարդկանց երջանիկ դեմքերը, օդում պայթող փուչիկները, երփնաթույր ծաղիկները, երեխաների տոնական աղաղակները կարծես ի լուր աշխարհի հայտարարեցին, որ Արցախը միշտ եղել է գիտության, մշակույթի, արվեստի ու արհեստի երկիր: Հայի ոգու շտեմարանը անսպառ է, նրա կամքը՝ անկոտրում: Թող մեր երեխաները վայելեն ոսկեծամ մանկության քաղցր պահերը, ապրեն գեղեցիկի աշխարհում:

Ձեզ բարի երթ...

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ստեփանակերտի ՄՊՍԿ մեթոդիստ

ՄԱՐԴԸ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԸ

ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ

1 Մաղթում եմ ձեզ արդյունավետ աշխատանք և ամենայն բարիք»:

Գիտաժողովում առաջին զեկուցումը կարդաց Գարիկ Իսրայելյանը, որի թեման՝ «Կյանքը տիեզերքում», վերաբերում էր Արեգակնային համակարգից դուրս գտնվող մոլորակային համակարգերին: Վերջին տասը տարվա մեջ նա շատ հետաքրքիր հետազոտություններ է կատարել հենց այս բնագավառում: Երկրի նման չափից դուրս շատ մոլորակներ կան մեր գալակտիկայում: Եվ սա արդեն գիտական փաստ է և ոչ թե ֆանտաստիկա: Հետազոտությունները կատարվել են Կանարյան կղզիներում, որտեղ ապրում և աշխատում է նա: Այստեղ գտնվում են աշխարհի ամենահզոր աստղադիտարանները և ամենամեծ աստղադիտակը՝ 10,5 մ տրամագծով: Նա ասաց, որ աստղադիտարանները որպես օրենք սարքվում են դրախտային վայրերում, և Արցախը պետք է բացառություն չկազմի՝ հույս հայտնելով, որ շատ շուտով այստեղ նույնպես հնարավոր կլինի նման հետազոտություններ անել:

Դեռևս անտիկ գիտնականները, մասնավորապես էպիկուրիեսը, ասել է, որ կան անվերջ աշխարհներ՝ նման և ոչ նման մերին, և մենք պետք է հավատանք, որ այդ բոլոր աշխարհներում ապրում են այնպիսի էակներ և բույսեր, ինչպես մեզ մոտ: Եվ միայն 21-րդ դարում արդեն նոր-նոր կարողանում են ապացուցել այս խոսքերի ճշմարտացիությունը: 1995թ. Միշել Մայորը և Եկիլիուսը հայտնագործեցին առաջին մոլորակը Արեգակնային համակարգությունից դուրս: Սա պատմական հայտնագործություն էր, որովհետև հազարավոր տարիներ մարդիկ խոսել են մոլորակների մասին, բայց ապացույց չեն ունեցել: Նրանց և էլի ուրիշ մեթոդներով դրանից հետո սկսեցին տասնյակ հարյուրավոր մոլորակներ գտնել, և այդ բնագավառը մեծ արագությամբ սկսեց զարգանալ: Երևի գիտության պատմության մեջ ոչ մի բնագավառ այդպիսի արագությամբ չի զարգանում, ինչպես մոլորակների հայտնագործման: Եվ այսօր արդեն ապացուցված 834 մոլորակ են ճանաչում, որոնք պտտվում են ուրիշ աստղերի շուրջ: Դրանց մի մասը Երկրի զանգված ունի, երկրի նման մոլորակներ են, բայց այն աստղերը, որոնց շուրջ պտտվում են, Արեգակի նման աստղեր չեն, այնպես որ, չեն կարող ասել, որ գտել են Երկրի երկվորյակներին: Գ. Իսրայելյանի տեղեկատվությամբ՝ բայց գիտնականները դրան արդեն շատ մոտ են կանգնած: Բոլոր մեթոդներն էլ տրամաբանության վրա հիմնված պարզ մեթոդներ են, և կարելի էր 100 տարի առաջ էլ գլխի ընկնել, պարզապես ամբողջ խնդիրն այն է, որ տեխնոլոգիաներ չկային, անհրաժեշտ ծախսեր չեն եղել: Իսկ աստղագիտությունը 80-90 տոկոսով տեխնոլոգիաների հիման վրա զարգացող գիտություն է, ասաց նա: Եվ ինչքան տեխնոլոգիաները զարգանում են, այնքան գիտնականները հեշտ են մոտենում հիմնական հարցի պատասխանին՝ կա՞, արդյոք, կյանք տիեզերքում: Գ. Իսրայելյանի համոզմամբ՝ դրա պատասխանը նույնպես տալու են տեխնոլոգիաները 10-15 տարի հետո: 3000 տարուց ավելի մարդկությունը գլուխ է կոտրում այս հարցի վրա, բայց մեր սերնդին է վիճակված տեսնել դա:

Կլոդ Նիկոլեն ոչ միայն աստղագնաց է, այլև մասնագիտությամբ աստղաֆիզիկոս: Ավարտել է Ժնևի համալսարանը՝ որպես աստղաֆիզիկոս և հետո դարձել տիեզերագնաց: Նրա մոտիկ բարեկամն է պրոֆեսոր Միշել Մայորը, ով երկու տարի առաջ այցելել էր Արցախ: Նա ասաց, որ Գարիկ Իսրայելյանի հետ երկար ժամանակ խոսում էին Արցախ այցելելու մասին, և վերջապես նման հնարավորություն եղավ, ինչի համար երախտապարտ է նրան և շնորհակալ արցախյան հյուրասիրության համար:



Նրա զեկուցման թեման էր՝ «Այցելություններ դեպի Հաբլ»: Նա շատ հետաքրքիր դրվագներ ներկայացրեց իր թռիչքներից և մասնավորապես, բաց տիեզերք դուրս գալուց: Ավելի քան 1000 ժամ է նա անցկացրել բաց տիեզերքում, այդ թվում՝ տիեզերական իր ճամփորդությունը՝ 8 ժամ 10 րոպե տևողությամբ: Նա չորս տարբեր տիեզերանավերի թռիչքների մասնակից է եղել: Կլոդ Նիկոլեն, գտնվելով բաց տիեզերքում, Հաբլ տիեզերական աստղադիտակի վրա տեղադրեց տեսախցիկներ: Դրանք օգտագործվել են 1995,1996,1998 թվականներին, տիեզերական ամենակարևոր օբյեկտների դիտումների ժամանակ:

Չարլզ Դյուկը, ով եկել էր տիկնոջ հետ, նույնպես շնորհակալություն հայտնեց Գ. Իսրայելյանին հրավերի համար՝ ասելով, որ վաղուց սպասում էր այս այցելությանը: «Մինչև Ղարաբաղ գալը ես և կինս ուսումնասիրել ենք հայ ժողովրդի պատմությունը և մշակույթը ու շատ հպարտ ենք, որ գտնվում ենք այնպիսի մի երկրում, որն առաջինն է ընդունել քրիստոնեությունը: Այն, ինչ տեսանք Ղարաբաղում, հրաշալի էր՝ և՛ մշակույթը, և՛ միջավայրը, և՛ հատկապես մարդիկ, և՛ մարդկային փոխհարաբերությունները»,- ասաց տիեզերագնացը: Մինչև «Ապոլոն՝ ավելի քան արկածներ» թեմայով իր զեկուցմանն անցնելը նա դրվագներ ներկայացրեց Նիլ Արմսթրոնգի մասին, որը եղել է իր մտերիմ ընկերը, և որի հետ նա թռիչքներ է կատարել՝ ասելով, որ նա ամենահումուտ, բանիմաց օդագնացն էր և ամենահամեստ անձնավորությունը, որպիսին երբևէ հանդիպել է: Նա երբեք չէր ասում, որ ինքն առաջին մարդն է, որ Լուսնի վրա ոտք է դրել: «Ապոլոն-11»-ի արշավախմբում Դյուկը տասներորդ մարդն է Լուսնի վրա ոտք դրած, որն իրականացվեց 1972թ.: Տեսաֆիլմի միջոցով լուսնագնացը ներկայացրեց այդ ամբողջ գեղեցիկ պատմությունը: Այնտեղ գտնվելու ամբողջ ժամանակ ցերեկ էր, որովհետև Լուսնի վրա Արևի մայր մտնելը տևում է երկու շաբաթ: Տեսնում էին ժայռեր, լեռներ. ճիշտ է, նրանք այնքան գեղեցիկ չեն, ինչպես այստեղ, բայց նույնպես գեղեցիկ են: Չ. Դյուկը Լուսին էր տարել իր ընտանեկան լուսանկարը: Լուսինը ծածկված էր ալյուրի պես մանր փոշով, որն առաջացել էր երկնաքարերի հարվածներից և վառոդի հոտ ուներ: «Մենք պետք է շատ զգույշ լինեինք մեր շարժումների մեջ, որովհետև վտանգը մեծ էր, ու ավելորդ շարժումի ընթացքում կարող էին հայտնվել որևէ փոսի մեջ և այլևս չէին կարող վեր բարձրանալ: Լուսնի վրա երբեք չես կորչի, որովհետև ամենուրեք թողնում ես ոտնահետքեր»,- պատմեց նա: Լուսնի վրա շարժվում էին նաև իրենց հետ տարած մեքենայով: Դյուկն անգամ կատակեց. ովքեր ուզում են 8 մլն դոլարանոց մեքենա ձեռք բերել, կարող են գնալ և բերել, բայց չմոռանան մարտկոցներ վերցնել հետները, որովհետև դրանք փչացել են: Թռիչքի տևողությունը 11 օր 1 ժամ 51 րոպե 5 վայրկյան է եղել: Լուսնի վրա այդ ուղևորության ընթացքում Չարլզ Դյուկն ընկերոջ՝ Ջոն Յանգի հետ մնացել է 71 ժամ 2 րոպե: Լուսնի վրա նրանք 27 կմ վարել են լուսնային հատուկ մեքենան: Դյուկի՝ ղարաբաղյան զեկուցման ընթացքում ներկայացվեց «Ապոլոն-16»-ի թռիչքի մասին պատմող ֆիլմը: Ամերիկյան «Ապոլոն» տիեզերական նախագիծն ամերիկյան և առհասարակ, համաշխարհային գիտության ոլորտի զարգացման ամենաթանկարժեք և կարևորագույն նախագծերից մեկն է եղել մարդկության պատմության ընթացքում: Այսօր էլ Չ. Դյուկը երազում է կրկին Լուսին բարձրանալու մասին, պարզապես նրան թույլ չեն տալիս՝ առաջացած տարիքի պատճառով: Դյուկը փարատեց այն կասկածանքը, թե Լուսնի վրա մարդ չի եղել, իբր սարքած գործ է:







Գիտաժողովը եզրափակեց Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը՝ ասելով, որ դա շարունակություն կունենա: Մտադիր են հիմնարար գիտության օջախ ստեղծել նաև Արցախում:

Տիեզերագնացներին ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ով նրանց այդ քայլը համարել է հերոսություն: «Մենք՝ տիեզերագնացներս և աստղագետներս, այնպիսի մասնագիտության կրող ենք, որը, ինչպես տիեզերքը, սահմաններ չի ճանաչում»,- ասել է Չ. Դյուկը՝ քաջ գիտակցելով, որ Ադրբեջանի իշխանությունները սև ցուցակում են ներառում այն մարդկանց, ովքեր Ղարաբաղ են այցելում Հայաստանի տարածքով և նրանց համարում Ադրբեջանի համար անցանկալի անձինք:

Գիտաժողովի մի ոչ պակաս հետաքրքիր մաս էր կազմում նշանավոր աստղագետների հետ խումբ-խումբ նկարվելը Նիլ Արմսթրոնգի լուսանկարի մոտ: Մեր խնդրանքով Կլոդ Նիկոլեն և Չարլզ Դյուկը բարեմաղթանքներ հղեցին «Լուսարար»-ին՝ իմանալով, որ նրա անվան հիմքում նույնպես Լույսն է:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բուհական

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ԵՐԱԶԱՆՔ

Արցախի պետական համալսարանի լրագրության բաժնի ուսանողների երազանքն իրականություն դարձավ. մայր բուհի հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետին կից ստեղծվեց հեռուստատաղավար, որտեղ ապագա լրագրողները կարող են իրենց առաջին քայլերն անել՝ տեսական գիտելիքները կիրառել գործնականում, այն էլ՝ սեփական ստուդիայում: Սեպտեմբերի 19-ին տեղի ունեցավ հեռուստատաղավարի հանդիսավոր բացումը, որին ներկա էր համալսարանի ղեկավարությունը:

Բացման խոսքում բուհի հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի դեկան Հովիկ Մուսայելյանը, ում ջանքերով, ի դեպ, իրականացվել է ուսանողների երազանքը, շնորհավորեց ուսանողներին՝ հույս հայտնելով, որ հեռուստատաղավարը կծառայի նպատակին: Նրա խոսքերով՝ Արցախի հանրային հեռուստատեսության տնօրենության հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ հեռուստատեսության համապատասխան մասնագետի օգնությամբ լրագրության բաժնի ուսանողները տեղում նկարահանումներ կկատարեն և հաղորդումներ կպատրաստեն եթեր հեռարձակելու համար: Իսկ հետագայում հմտանալուց հետո, նրանց կտրամադրվի նաև եթերաժամ: Հարկ է նշել, որ ապագա լրագրողներից մեծ ակնկալիքներ ունի բուհի ղեկավարը: Հաճելի առիթով շնորհավորելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը նշեց, որ ոչ բոլոր համալսարաններն են, որ ունեն այսպիսի հնարավորություն: Ուստի բաժնի ուսանողներից ակնկալում է բեղմնավոր, որակյալ աշխատանք: Ուսանողների հետ իր ուրախությունը կիսեց և երևույթը արժևորեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը, ով երկար տարիներ եղել է հայ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ: Նա նույնպես փաստեց, որ լրագրության բաժինը տեխնիկական վերազինման կարիք վաղուց էր զգում, բայց հաջողվեց միայն այսօր: «Լրագրողն իր տաղանդը դրսևորում է նաև խոսքի և պատկերների համադրության միջոցով: Սա թանկ նվեր է ուսանողներին, ինչը կնպաստի նրանց արագ աճին, նրանց զարգացմանը: Համալսարանի որևէ բաժնի հաջողություն խոսում է այդ հաստատության օգտին»,- ասաց Ս. Խանյանը: Լրագրության բաժնի ուսանողուհի Լաուրա Գաբրիելյանն իր հերթին հավաստիացրեց, որ տեխնիկապես հագեցած հեռուստատաղավարը կնպաստի իրենց մասնագիտական ունակությունների զարգացմանն ու կատարելագործմանը: Որ ջանք ու եռանդ չեն խնայի՝ ոլորտում լուրջ մասնագետներ դառնալու և Արցախի լրագրողական դաշտը համալրելու համար:



Հավելենք, որ ներկայումս ԱրՊՀ լրագրության բաժնում լուրջ փոփոխություններ են տեղի ունենում. մասնավորապես այստեղ դասավանդում են միայն լրագրության մասնագետներ: Բացի այդ, ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ՝ ապագա լրագրողների համար հաճախակի են կազմակերպվում օնլայն դասախոսություններ, որոնք վարում են հայաստանյան առաջնակարգ մասնագետներ: Իսկ տեղում էլ վաստակաշատ լրագրողների հետ հանդիպումները փորձի փոխանակման իսկական դպրոց են հանդիսանում նրանց համար:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԻՄ ՓՈՐՁԻՑ

Հանրակրթական դպրոցներում ուսումնասիրվող հարթաչափության դասընթացներում առաջարկվող խնդիրները լուծվում են հիմնականում տեսական նյութի՝ ապացուցված թեորեմների անմիջական կիրառմամբ, որն, անշուշտ, խիստ կարևոր է: Սակայն դասընթացի ավելի խորն ուսումնասիրման, սովորողների ստեղծագործական ունակությունների բացահայտման և զարգացման համար ոչ պակաս կարևոր է նաև ոչ ստանդարտ և լուծման այ հնարքներ պահանջող խնդիրների քննարկումը:

Մեր կարծիքով այդ կարգի շատ խնդիրների լուծման բանալի կարող են հանդիսանալ Ստյուարտի, Պտղոմեոսի և այլ թեորեմներ:

1). Ստյուարտի թեորեմը և նրա կիրառումը խնդիրներ լուծելիս



Դիցուք՝ AD=d, DC=n, BD=m, BC=a: Այդ դեպքում՝

$d^2a=mb^2+nc^2-amn$:

Կատարենք հետևյալ նշանակումները.

1. Արտագծած շրջանագծի կենտրոն՝ O, շառավիղ՝ R
2. Ծանրության կենտրոն՝ M
3. Ներգծյալ շրջանագծի կենտրոն՝ O_1, շառավիղ՝ r
4. Բարձրությունների (կամ նրանց շարունակությունների) հատման կետը՝ H
5. a,b,c կողմերով եռանկյան կիսապարագիծը՝ $p=\frac{a+b+c}{2}$:

Խնդիր 1. Հաշվել OM-ը:

Լուծում



BC կողմի միջնակետը նշանակենք D: $AD=m_a$: $AM=\frac{2}{3}.m_a$: ΔODC-ից՝

$OD^2=OC^2-DC^2=R^2-\frac{a^2}{4}$:

AO=R,

$MD=\frac{1}{3}.m_a$: ΔADO-ի նկատմամբ կիրառենք Ստյուարտի թեորեմը:

$OM^2.AD=OD^2.AM+OA^2.MD-AD.AM.MD$: Այս հավասարության երկու մասերը բաժանելով AD-ի վրա, կստանանք.

$$OM^2=\frac{\left(R^2-\frac{a^2}{4}\right).\frac{2}{3}.m_a}{m_a}+\frac{R^2.\frac{1}{3}.m_a}{m_a}-\frac{2}{3}.m_a.\frac{1}{3}.m_a=\frac{4R^2-a^2}{6}+\frac{R^2}{3}-\frac{2.(b^2+c^2)-a^2}{18}=R^2-\frac{a^2+b^2+c^2}{9}$$

:

$$OM=\frac{1}{3}.\sqrt{9R^2-\left(a^2+b^2+c^2\right)}:$$

Խնդիր 2. Հաշվել MO_1-ը:

Լուծում

MO_1-ը հաշվելու համար նախ հաշվենք AO_1D եռանկյան կողմերը:



$AD=\frac{1}{2}\sqrt{2(b^2+c^2)-a^2}$;

O_1DK ուղղանկյուն եռանկյունուց.

$DK=\frac{a}{2}-(P-b)=\frac{b-c}{2}$;

$O_1D^2=r^2+\frac{(b-c)^2}{4}$; $O_1D=\frac{1}{2}\sqrt{4r^2+(b-c)^2}$; AO_1-ը հաշվելու համար տանենք $O_1F\perp AB$: F-ը կլինի ABC եռանկյան ներգծյալ շրջանագծի և AB կողմի շոշափման կետը: Հայտնի է, որ AF=P-a: $O_1F=r$: ΔAO_1F-ից՝

$AO_1^2=O_1F^2+AF^2=r^2+(P-a)^2$: $AO_1=\sqrt{r^2+(P-a)^2}$: MO_1-ը հաշվելու համար ΔAO_1D -ի նկատմամբ կիրառենք Ստյուարտի թեորեմը.

$O_1M^2.AD=O_1D^2.AM+O_1A^2.MD-AD.AM.MD$:

$$O_1M^2=\frac{\left(r^2+\frac{(b-c)^2}{4}\right).\frac{2}{3}m_a}{m_a}+\frac{\left(r^2+(p-a)^2\right).\frac{1}{3}m_a}{m_a}-\frac{2}{3}m_a.\frac{1}{3}m_a=\frac{r^2+(p-a)^2}{3}+\frac{4r^2+(b-c)^2}{6}-\frac{2(b^2+c^2)-a^2}{18}:$$

Որոշ պարզեցումներից հետո կստացվի. $MO_1=\frac{1}{3}\sqrt{9r^2-3P^2+2(a^2+b^2+c^2)}$:

2. Պտղոմեոսի թեորեմը և նրա կիրառումը խնդիրներ լուծելիս

<u>Թեորեմ:</u> Ներգծյալ ուռուցիկ քառանկյան անկյունագծերի արտադրյալը հավասար է նրա հակադիր կողմերի արտադրյալների գումարին:

Խնդիր 3. R շառավղով շրջանի մեջ տրված են AB=a և BC=b լարերը: Գտնել AC լարի երկարությունը:



Լուծում

Տանենք BD տրամագիծ: Կստանանք՝

$AD=\sqrt{BD^2-AB^2}=\sqrt{4R^2-a^2}$

$CD=\sqrt{BD^2-BC^2}=\sqrt{4R^2-b^2}$

Նշանակենք AC=X: Պտղոմեոսի թեորեմի հիման վրա կարող ենք գրել.

$X.2R=a.\sqrt{4R^2-b^2}+b.\sqrt{4R^2-a^2}$, այստեղից՝

$$X=\frac{a.\sqrt{4R^2-b^2}+b.\sqrt{4R^2-a^2}}{2R}:$$

Եթե AB=BC, ապա կստանանք. $X=\frac{a.\sqrt{4R^2-a^2}}{R}$ (1)

Այս առնչությունը կարելի է օգտագործել, օրինակ, կանոնավոր բազմանկյան կողմերը հաշվելիս: Եթե $a=a_{2n}$, ապա $X=a_n$, որտեղ a_n-ը շրջանագծին ներգծված կանոնավոր բազմանկյան կողմն է:

Այս դեպքում (1) բանաձևը կստանա այսպիսի տեսք. $a_n=\frac{a_{2n}\sqrt{4R^2-a_{2n}^2}}{R}$: Այս վերջինը լուծելով a_{2n}-ի նկատմամբ, կստանանք. $a_{2n}=\sqrt{2R^2-R\sqrt{4R^2-a_n^2}}$:

Հայտնի է, որ $a_4=R\sqrt{2}$: Այդ դեպքում $a_8=\sqrt{2R^2-R\sqrt{4R^2-2R^2}}=\sqrt{2R^2-R^2\sqrt{2}}=$ $=R\sqrt{2-\sqrt{2}}$:

Հայտնի է, որ $a_6=R$: Այդ դեպքում $a_{12}=\sqrt{2R^2-R\sqrt{4R^2-R^2}}=\sqrt{2R^2-R^2\sqrt{3}}=R\sqrt{2-\sqrt{3}}$

Խնդիր 4. A,B,C,D ներգծյալ կանոնավոր 7-անկյան հաջորդական գագաթներն են: Ապացուցել, որ $\frac{1}{AB}=\frac{1}{AC}+\frac{1}{AD}$:



Լուծում

Դիցուք A,B,C,D կետերը կանոնավոր 7-անկյան հաջորդական գագաթներն են: Վերցնենք 7-անկյան 5-րդ՝ E գագաթը: AEDC ներգծյալ քառանկյան նկատմամբ կիրառենք Պտղոմեոսի թեորեմը, կստանանք. AD.EC=AC.ED+AE.CD (1) Բայց AE=AD, CD=AB, ED=AB, EC=AC: Այսպիսով, (1) հավասարությունից կարող ենք գրել՝ AD.AC=AC.AB+AD.AB:

Այս հավասարության երկու կողմը բաժանելով AD.AC.AB-ի վրա՝ կստանանք. $\frac{1}{AB}=\frac{1}{AD}+\frac{1}{AC}$:

Խնդիր 5. Դիցուք A_1, B_1, C_1-ը ABC եռանկյան, համապատասխանաբար, A, B, C անկյունների կիսորդների հատման կետերն են նրա արտագծած շրջանագծի հետ: Ապացուցել, որ $AA_1\cos\frac{A}{2}+BB_1\cos\frac{B}{2}+CC_1\cos\frac{C}{2}=a+b+c$, որտեղ a-ն,b-ն,c-ն ABC եռանկյան կողմերի երկարություններն են:



Լուծում

Նշանակենք $A_1B=x$, $AB_1=y$, $BC_1=z$: Պարզ է, որ $A_1C=A_1B=x$: ABA_1C քառանկյան Նկատմամբ կիրառելով Պտղոմեոսի թեորեմը՝ կարող ենք գրել. $AA_1.BC=AC.A_1B+AB.A_1C$, կամ՝ $AA_1.a=(b+c).x$: Նույն ձևով կարող ենք գրել. $BB_1.b=(a+c).y$, $CC_1.c=(a+b).z$:

$AA_1=\frac{(b+c).x}{a}$, $BB_1=\frac{(a+c).y}{b}$, $CC_1=\frac{(a+b).z}{c}$:

$AA_1\cos\frac{A}{2}+BB_1\cos\frac{B}{2}+CC_1\cos\frac{C}{2}=\frac{(b+c).x}{a}.\cos\frac{A}{2}+\frac{(a+c).y}{b}\cos\frac{B}{2}+\frac{(a+b).z}{c}\cos\frac{c}{2}$ (*)

ΔA_1BC -ի նկատմամբ կիրառելով կոսինուսների թեորեմը՝ կարող ենք գրել.

$BC^2=A_1B^2+A_1C^2-2.A_1B.A_1C.\cos A_1=x^2+x^2-2x.x.\cos A_1=2x^2-2x^2.\cos A_1=$ $=2x^2.(1+\cos A)$: $x^2=\frac{a^2}{2.(1+\cos A)}=\frac{a^2}{4\cos^2\frac{A}{2}}$: $x=\frac{a}{2\cos\frac{a}{2}}$: Նույն ձևով՝ $y=\frac{b}{2\cos\frac{B}{2}}$,

$z=\frac{c}{2\cos\frac{c}{2}}$: Այս վերջին երեք հավասարություններից և (*)-ից կարող ենք գրել.

$$AA_1\cos\frac{A}{2}+BB_1\cos\frac{B}{2}+CC_1\cos\frac{c}{2}=\frac{b+c}{a}.\cos\frac{A}{2}.\frac{a}{2\cos\frac{A}{2}}+\frac{a+c}{b}.\cos\frac{b}{2}+\frac{a+b}{c}.\cos\frac{c}{2}.\frac{c}{2\cos\frac{c}{2}}=$$

$$=\frac{b+c}{2}+\frac{a+c}{2}+\frac{a+b}{2}=a+b+c:$$

Մերուժան ՍԱՐԳՍՅԱՆ
Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի
մաթեմատիկայի ուսուցիչ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ԻՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ ԿՅԱՆՔ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է ՆՎԻՐՈՒՄ

Օգոստոսի 1-ին լրացավ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանի ծննդյան 65-ամյակը: Իմաստավորված աշխատանքային 43 տարիներ, որոնք լեցուն են ստեղծագործական պրպտումներով, նվիրումով, հայրենասիրությամբ: Թե մանկավարժական ինչպիսի հարուստ ու բարդ ուղի է անցել Գրետա Գրիգորյանը, ներկայացնենք ստորև:

Ծնվել է Ասկերանի շրջանի Այգեստան գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում՝ 1970 թվականին ավարտելով այն: Մերժել է նույն ինստիտուտում ուսումը շարունակելու առաջարկը: Աշխատանքային գործունեությունն սկսել է նախակրթարանից՝ 4 տարի աշխատելով Ասկերանի մսուր-մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի: 1974թ. պարգևատրվել է «Լուսավորության գերազանցիկ» կրծքանշանով: 1974-ի հունվարից մինչև 1977թ. օգոստոս ամիսն աշխատել է ժողկրթության Ստեփանակերտի քաղաքային բաժնում՝ նախ՝ մեթոդիստի, ապա՝ մեթոդկաբինետի վարիչի պաշտոններում: Այդ տարիներին իր նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ քաղաքի 15-ից ավելի նախադպրոցական հիմնարկների աշխատանքի առաջավոր փորձն ընդհանրացնելու նպատակով նկարահանել-- է ուսումնական ֆիլմ, որի օրինակը մինչ օրս պահպանվում է: Աշխատանքների ամենամյա գնահատման արդյունքներով 1974թ. և 1975թ. ճանաչվել է սոցմրցության հաղթող և պարգևատրվել կրծքանշանով: 1977-1991թթ. աշխատել է ԼՂ ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման մարզային (հանրապետական) ինստիտուտում՝ որպես տարրական ուսուցման ուսումնամեթոդական կաբինետի վարիչ:

Այդ և հետագա տարիներին ընդհանրացրել է և հրատարակության հանձնել 10 ուսուցչի աշխատանքի փորձ, որոնցից շատերը վաստակավոր ուսուցչի կոչման են արժանացել: Մասնակցել է մի շարք գիտագործնական և գիտամեթոդական կոնֆերանսների՝ Վիլնյուսում, Մոսկվայում, Բաքվում, Լենինականում, այլուր: Այդ տարիներին մարզը լինելով Ադրբեջանի ենթակայության տակ, համարյա արգելված էր կապը Հայաստանի հետ: Չնայած դրան, տիկին Գրետան ամուր կապ էր ստեղծել ՀՀ գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտի, ուսուցիչների կատարելագործման հանրապետական և Երևանի քաղաքային ինստիտուտների, մեթոդական կենտրոնի և Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հետ սերտորեն համագործակցելով, որի պատճառով Ադրբեջանի լուսավորության մինիստրության աշխատողների կողմից հանդիմանանքի է արժանացել՝ իրենց «անտեսելու» համար: 1983, 1984, 1987 թվականներին շրջանային, մարզային գիտագործնական կոնֆերանսներ է կազմակերպել և զեկուցումներով հանդես եկել նաև ինքը՝ կրկին սերտորեն համագործակցելով հայաստանյան վերոնշյալ կառույցների հետ:

Տիկին Գրետան ամենայն ջերմությամբ է հիշում 1987 թվականի՝ առավել լայն ընդգրկումով կազմակերպած գիտագործնական կոնֆերանսը, որին ներկա գտնվող Գուրգեն Գաբրիելյանը, Երևանից հրավիրված 12 դասախոսներին դիմելով, ասաց. «Մեր Գրետան էդ ի՞նչ մոգական ուժ ունի, որ կարողանում է ձեզ ձգել և բերել այստեղ»: Իսկ մոգական ուժը Ղարաբաղն էր ու հայկյան արմատների ձգող ուժը:

Գրետա Գրիգորյանը 1986թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

Իր կատարած հիմնական աշխատանքներին զուգահեռ, նվիրյալ մանկավարժը կատարել է նաև մի շարք հասարակական աշխատանքներ. եղել է ժողովրդական ատենակալ, պրոպագանդիստ, արհմիության նախագահ և արժանացել միութենական պարգևների:

1991թ. մայիսից մինչ օրս կրկին աշխատում է Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնում՝ սկզբում՝ մեթոդիստի, մեթոդկաբինետի վարիչի, բաժնի վարիչի տեղակալի, ապա՝ գլխավոր մասնագետի պաշտոններում: Հիմնական աշխատանքին զուգահեռ, հայոց լեզվի և գրականության դասեր է վարել Ստեփանակերտի դպրոցներում: Պատերազմական տարիների ամենադժվար պահերին անգամ տիկին Գրետան չի լքել Արցախը, աշխատել է նաև ժամանակավորապես բացակայող գործընկերների փոխարեն:

1996 թվականին ղեկավարել է կառավարության նախաձեռնությամբ կազմակերպված «Հայոց լեզու՝ ռուսալեզու մտավորականության համար» դասընթացը:

Գրետա Գրիգորյանը 1986-1990թթ. հեռակա կարգով սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայում՝ «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» մասնագիտությամբ՝ հանձնելով բոլոր թեկնածուական մինիմումները, սակայն ղեկավարների մահից հետո նոր ղեկավար չի ընտրել և պաշտպանության չի ներկայացել (խնդիրներ են ծագել նաև առողջության հետ կապված, պատերազմի հետևանքով ավերված բնակարանի վերականգնման հարցերը լուծելիս):

Իր շնորհակալ գործունեության ընթացքում Գ. Գրիգորյանը կազմակերպել է նաև մի շարք ուխտագնացություններ թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների համար: Վերջերս մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների 30 ուսուցչի համար իր նախաձեռնությամբ Արևմտյան Հայաստան կազմակերպած ուխտագնացության օրերին էլ հենց նշեց իր 65-ամյա հոբելյանը՝ անկրկնելի, անմոռաց ու նվիրական, որին մասնակից էր նաև տողերիս հեղինակը:

Խոսուն են տիկին Գրետայի տարաբնույթ պարգևները՝ տրված նրա աշխատանքային գործունեության ամենատարբեր տարիներին: 1997-ին ծննդյան 50-ամյակի առթիվ արժանացել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության շնորհակալագրին: 2001թ. արժանացել է Ստեփանակերտ քաղաքի «20-րդ դարի լավագույն մանկավարժ» պատվավոր կոչմանը, 2005թ.՝ «Հայոց գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի առթիվ» ԼՂՀ կառավարության պատվոգրին, 2007-ին՝ «Անբասիր աշխատանքի, մայրաքաղաքին մատուցած ծառայությունների և Ստեփանակերտի օրվա առթիվ», իսկ 2011-ին՝ «Օրինակելի աշխատանքի և ուսուցչի օրվա առթիվ»՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի պատվոգրերին:

Բազմավաստակ մանկավարժը մի շարք մեթոդամանկավարժական հոդվածների հեղինակ է՝ տպագրված ամենատարբեր լրատվամիջոցներում:

- Աշխատանքս, որտեղ էլ որ եղել եմ, ինձ բավականություն է պատճառել: Չնայած ինչ-որ բան ստանալու ակնկալիքով չեմ աշխատել, այնուամենայնիվ, գոհ եմ մնացել, երբ այն գնահատվել է,- անկեղծանում է տիկին Գրետան:

- Մանկավարժը պետք է նրբանկատ լինի, դա է նրա լավագույն արդյունքի գրավականը,- միշտ սիրում է կրկնել նա՝ միաժամանակ ուսուցչի մեջ արժևորելով անաչառությունը, սկզբունքայնությունը, բարությունն ու ազնվությունը:

Որքան կարգապահ է ճանաչված մանկավարժն ինքը, այնքան էլ կարգ ու կանոնով են դրված նրա մանկավարժական ուղին մատնանշող փաստաթղթերը. ահա իր՝ մանկավարժական գործունեության մասին տպագրված նյութերի ցանկը, ահա իր կողմից գրված և հանրապետության դպրոցներին առաքված մեթոդահրահանգչական նամակները, թեմատիկ նյութերի ուսուցման հանձնարարականների ու զեկուցումների ցանկը, ահա իր կողմից ընդհանրացված մանկավարժական առաջավոր փորձի ցուցակը: Ամեն ինչ արված է խնամքով ու պատասխանատվությամբ, և այս ամենն ամբարում է իմաստավորված մի կյանք, որը կոչվում է ՆՎԻՐՈՒՄ:

Մշտազբաղ է տիկին Գրետան: Մերթ նրան կտեսնես մանկավարժական ինչ-որ մրցույթի նախապատրաստական եռուզեռի ու վազվզոցի մեջ, մերթ առաջավոր փորձի փոխանակման աշխատանքների կազմակերպման տիրույթում, մերթ շնորհակալ մի նախաձեռնություն կազմակերպելիս՝ մշտապես խորասուզված մանկավարժական իր ուրույն ու միայն իրեն պատկանող աշխարհում:

- Ես իմ աշխատանքային գործունեության մեջ առաջնորդվել եմ Չերնիշևսկու պարտավորեցնող այն ասույթով, որով պետք է առաջնորդվի յուրաքանչյուր մանկավարժ,- նշում է Գրետա Գրիգորյանը՝ մեկ անգամ ևս կրկնելով իր կյանքի նշանաբանը դարձրած իմաստնությունը. «Հոգացեք ամենից առաջ այն մասին, որ ձեր սանը մարդ դառնա բառիս իսկական իմաստով»: Սա, թերևս, մանկավարժի ամենամեծ հաղթանակն է:

- Յուրաքանչյուր մարդ մի ամբողջ հատոր է, եթե միայն դուք գիտեք, թե ինչպես կարդալ այն,- ասել է ամերիկացի գրող Ուիլյամ Չենինգը: Անշուշտ, մարդ-հատորն իմաստավորում է իր և ուրիշների կյանքը՝ իր ինքնատիպ ու յուրակերպ գոյությամբ: Եվ հյուսվում է մարդու կենսագրությունը՝ նվիրական աշխատանքով ներծծված: Ու մարդը դառնում է պատմությունն առաջ մղող դերակատարներից մեկը՝ լավ գործերով, անշուշտ, արդարացնելով իր բարեծին գոյությունը:

Այդպիսի անհատականություն է Գրետա Գրիգորյանը՝ միշտ կամեցող ու միշտ սատարող:

Շնորհավորենք Գրետա Գրիգորյանին՝ իր 65-ամյա հոբելյանի և Ուսուցչի օրվա կապակցությամբ՝ բարեմաղթելով մանկավարժական է՛լ ավելի ուժ ու ավյուն, անխաթար խաղաղություն ու անափ երջանկություն:

Սոֆյա ՍԱՐԳՍՅԱՆ
«Ստեփանակերտ» թերթի գլխավոր խմբագիր

ՀՊԱՐՏ ՈՒ ԿԵՆՍԱԽԻՆԴ ԽԱՌՆՎԱԾՔ

Կան մարդիկ, որ իրենց ապրած օրերով կարողանում են ուրույն գույներով ու երանգներով ձուլվել կյանքին ու մարդկանց, գեղեցկացնել հասարակություն ասված ծաղկաբույլը և ինքնատիպ բառուբանով համեմել այն:

Դպրոցի ողջ աշխատանքային կոլեկտիվն ի սրտե շնորհավորում է սիրելի ու հարգարժան գործընկերոջը՝ Մելսիդա Միրզոյանին, 60-ամյա հոբելյանի կապակցությամբ: 60 գարուններ ետևում թողած ուսուցչուհին իր հետաքրքիր կերպարով բազում սերունդների է ճանապարհել դեպի մեծ կյանք, իր խորհուրդներով ու մանկավարժի խոհական պատգամներով լուսավորել շատերի հոգիները...

Մանկավարժության ու կյանքի փորձով վաստակ նվաճած ու իմաստնացած ուսուցչուհին իր արած-թողածով ու տվածով հպարտանալու իրավունք ունի: Իր վաստակով նա իր ուրույն ու գեղեցիկ տեղն ու դիրքն ունի կոլեկտիվում՝ իր հումորով, իր բառ ու բանով: Դպրոցի ուսուցչական կոլեկտիվը տիկին Միրզոյանին ցանկանում է ամենից լավն ու բարին, առողջություն, երկար ու քաջառողջ տարիների կյանք, արևշատություն..., որ՝ երկրային կյանքի գարունները հատեն մեկ դարի սահմանը և միշտ խինդ, ուրախություն, բազում երջանիկ օրեր ընծայեն նրան, որ իր հպարտ ու կենսախինդ խառնվածքով և իրենով լցնի օրը:

Շնորհավոր Ձեր գեղեցիկ ու հարուստ 60-ամյա հոբելյանը, սիրելի գործընկեր:

Ստեփ. Ա. Ղուլյանի անվան հ. 2 դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

ՈՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՇՏ ԲԱՐԻ ԼԻՆԵՆ...

Ամառը միշտ էլ յուրօրինակ հետք է թողնում բոլորիս վրա, հաճելի հիշողություններ, որոնց տաք շնչով ջերմանում ենք անգամ ցուրտ ձմռանը: Իսկ թվականիս ամառը մի առանձնահատուկ հիշողություն կդառնա Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչների համար: Շրջանի արհմիության նախագահ Գայանե Գաբրիելյանի նախաձեռնությամբ փոքրիկ, բայց բավականին բովանդակալից շրջագայություն կազմակերպվեց դեպի Մայր Հայաստան: Չնայած սեղմ ժամանակին, կարողացանք հյուրընկալվել չքնաղ Ծաղկաձորում՝ վայելելով յուրաքանչյուր պահն ու վայրկյանը: Շատ տպավորիչ էր Կեչառիսի վանքը, որի ամեն մի քար մեր դարավոր պատմության գաղտնիքներն ունի պահած, ու դեռ դարեր որպես անխոս վկա կհյուրընկալի սերունդներին:

Մեզանից շատերը վաղուց է, ինչ քաղաքամայր Երևանում չէին եղել, մի փոքրիկ շրջայց էլ կատարեցինք աշխարհի ամենավարդագույն քաղաքում, համակվեցինք ուսանողական տարիներից մնացած հաճելի հիշողություններով:

Հասցրինք տեսակցել գեղեցկուհի Սևանին, որը դեպի իրեն է ձգում աշխարհասփյուռ հայությանը: Չգիտեմ ով ինչպես, բայց ես աշխարհի ամենամեծ ծովերի հետ անգամ չեմ փոխի իմ այդ ադամանդի պես փայլող գանձ-Սևանը, որտեղ, ինչպես Սևակը կասեր, երկինքն իր ճիշտ պատճենն է հանում:

Առանց այն էլ կարճ ժամանակը արձակված նետի պես թռչում էր, յուրաքանչյուր տեղից կտրվելը բավական դժվար էր, բայց դե, ինչ արած, հետդարձի ճանապարհը մեզ էր սպասում:

Այո, վերադառնում էինք, սակայն սա դեռ ամենը չէր, ճանապարհին մեզ սպասում էր Տաթևը՝ աշխարհի ամենաերկար իր ճոպանուղով, իր ողջ հմայքով ու վեհությամբ: Նայում էի այդ հրաշքին ու մտածում, Տաթևն է նման շուք հաղորդում տեղանքի՞ն, թե՞ հակառակը, բայց համոզիչն այն է, որ մարդ և բնություն այստեղ գործել են չափազանց ներդաշնակ, ու յուրաքանչյուրս կարծես վախենում էինք մեր անգամ քայլով խաթարել այդ ներդաշնակությունը, այն հաշտությունը, որ առկա էր մարդու և բնության միջև: Անկեղծ ասած, ամբողջ ճանապարհին մտածում էի, թե կհրաժարվեմ նստել ճոպանուղին, կվախենամ, բայց ինձ նման մտածողներին շտապեմ հավատացնել, որ վախենալու ոչինչ չկար, հմայվելով բնությամբ, չես էլ հասցնում աչքդ թարթել ու անգամ հպարտությամբ ես համակվում, որ աշխարհի ամենաերկար ճոպանուղին քո հայրենիքում է:

Ամեն ինչ հիասքանչ էր, տպավորությունները՝ վառ, հիշողությունները՝ թանկ, մեր ամեն մի քայլ հավերժացավ լուսանկարչական ապարատով, և կգա իր տեղն զբաղեցնելու կենսագրություն կոչվող մեր արխիվում:

Արդեն քանի ամիս է անցել, բայց դեռ շարունակում ենք վերհիշել, քննարկել, թե ինչ բաց թողեցինք, ինչ հասցրինք՝ համալրումը թողնելով, իհարկե, գալիքին: Այդ ամենը հնարավոր չէ թղթին հանձնել, կան բաներ, իհարկե, որ ասելու համար չեն, այլ զգալու: Վստահ եմ, որ այս նյութն ընթերցելուց իմ գործընկերների մոտ կարթնանան հենց չգրված բառերի քաղցր զգացումները:

Իսկ վերջում կուզենայի իմ երախտագիտության խոսքն ուղղել տիկին Գաբրիելյանին, ով մեծ նվիրումով մեզ գեղեցիկ ամառային օրեր պարգևեց՝ մի քանի օր կտրելով առօրյա հոգսերից:

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կարմիր գյուղի միջն. դպրոցի ուսուցչուհի

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ - 500

Միջազգային գիտաժողով

«ՇՈՒՇԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՋԱԽ»

Հայ գրատպության 500-ամյակին նվիրված՝ սեպտեմբերի 16-19-ը Շուշիում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ» թեմայով, որը նախաձեռնել էին ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը, Արցախի պետական համալսարանը, Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնը:

Շուշին հանդիսացել է հայ մշակույթի, գրատպության և հրատարակչության կենտրոններից մեկը 18-րդ դարում: Միջոցառումը նպատակ ուներ վերարժևորելու Շուշիի անցյալը որպես Անդրկովկասի լուսավորության կենտրոնի, փորձել ուրվագծել նրա հետագա զարգացումը, հեռանկարները՝ հայոց բերդաքաղաքի երբեմնի փառքը վերականգնելու միտումով:

Նախքան գիտաժողովն սկսելը՝ մասնակիցները մեծ հետաքրքրությամբ և հպարտության զգացումով ծանոթացան «Ավան Շուշի պլազա», հյուրանոցի (որտեղ անցկացվեց միջոցառումը) ճեմասրահում բացված ցուցահանդեսին, որտեղ ներկայացված էին 1827-1920թթ. Շուշիում տպագրված ուշագրավ գրքերը: Ցուցադրված գրքերը ևս մեկ անգամ վկայում էին այդ տարիներին Շուշիի գիտակրթական և մշակութային բարձր մակարդակի մասին: Տարբեր տպարաններ հրատարակել են Ֆիրդուսու «Ռուստամ և Զոհրաբ», Գոգոլի «Տարաս Բուլբա», Չեխովի «Մարդը պատյանի մեջ», «Բնագիտական համառոտ զրույցներ», Չարլզ Դարվինի «Մանկան կյանքը», «Հայկական քերականություն-համառոտագրություն», «Քերականություն հայկազյան լեզվի», Ռաֆֆու «Խենթը», հայ, ռուս և համաշխարհային մյուս մեծերի ստեղծագործությունները: Գրքերը տրամադրել էր ՀՀ ազգային գրադարանը:

Գիտաժողովի լիագումար նիստը վարում էր «Կաճառ» գիտական կենտրոնի նախագահ, պատմական գիտությունների թեկնածու Միհր Հարությունյանը: Ողջունելով ներկաներին՝ նա ասաց, որ հայ գրատպության 500-ամյա հոբելյանը պարտավորեցնում է գիտական մակարդակով արժևորելու և վերաիմաստավորելու Շուշիի՝ որպես հայկական քաղաքակրթության և մշակութաստեղծ միջավայրի դերը հայկական իրականության մեջ՝ անդրադառնալով մշակույթի տարբեր ոլորտների նվաճումներին, այդ թվում՝ գրատպության ավանդույթներին, որոնք ձևավորվել են եղել Արցախի հոգևոր-մշակութային կենտրոնում:

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը իր ողջույնի խոսքում արժևորեց գիտաժողովի նշանակությունը Շուշիի մշակութային ժառանգությունն ի մի բերելու գործում: Հատկանշական է, որ գիտաժողովն անցկացվում էր Շուշիի համար հոբելյանական՝ 20-ամյակի տարում, և հյուրերը հնարավորություն ունեին ծանոթանալու քաղաքում կատարվող վերափոխումներին, նոր ծրագրերին: Մասնավորապես արդեն պատրաստ է նախարարությանը հատկացված շենքը, որտեղ պիտի այսուհետ հանգրվանի: Ավարտին են մոտենում Արցախի պետական ազգային կերպարվեստի թանգարանի շինարարական աշխատանքները, շահագործման կհանձնվեն պատկերասրահներ, թանգարաններ:

ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանն իր ելույթում հույս հայտնեց, որ հայ գրատպության հիշարժան հոբելյանի նշումը հնարավորություն կտա մոռացության փոշուց վեր հանել պատմական նոր իրողություններ:

Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը հետաքրքիր դիտարկում արեց վերջին երկու դարերում Շուշիի կռվախնձոր դառնալու կապակցությամբ: Այն դարձել էր լուսավորության կենտրոն, իսկ լուսավորություն տարածող օբյեկտի շուրջ որպես կանոն, խավարն ավելի է թանձրանում, սեղմվում, որպիսին մեր ոխերիմ թշնամին է:

ՀՀ պաշտպանության նախարարության Դ. Կանայանի անվան ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետ Հայկ Քոթանջյանն ուրվագծեց Շուշիի քաղաքական, մշակութային ռազմավարական զարգացման հետագա ուղղությունները, կարևորեց 1992թ. մայիսի 9-ի Շուշիի ազատագրման դերը հայոց պատմության հոլովույթում:

Գիտաշխատող Գոհար Ավագյանն իր ելույթում հայտնեց, որ ՀՀ ազգային արխիվում պահպանվում են բազմաթիվ տեղեկություններ Ղարաբաղի պատմությունից, այդ թվում՝ մելիքությունների մասին: Նա ուշագրավ նվեր հանձնեց մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը՝ Քաշաթաղի տարածքում հողային իրավունքների հաստատման վերաբերյալ Նադիր Շահի հրովարտակը:

ՀՀ ազգային գրադարանի տնօրենի տեղակալ Հայկանուշ Ղազարյանը կարևորեց Հայաստանի ամենամեծ գրադարանի և մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության միջև սկսված համագործակցությունը, որի մի արտահայտությունն էլ գիտաժողովի սկզբում գրքերի ցուցահանդեսն էր: Նա 15 անուն գիրք նվիրեց Արցախի գրադարաններին բաժանելու նպատակով:

Ցուցադրվեց «Շուշիի տպարանների պատմությունը» հեռուստաֆիլմը, որում նրա հեղինակ՝ Արցախի հանրային հեռուստատեսության լրագրող Սոֆի Իվանիդիսը շուշեցի պատմաբան Աշոտ Հարությունյանի օգնությամբ արժեքավոր տեղեկություններ է տալիս այդ մասին:

Լիագումար նիստում զեկուցումներ կարդացին բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը՝ «Հայ գրատպությունն Արցախում», Եկատերինա Ռոդիոնովան՝ «Շուշիի մշակութային կյանքը ռուսական ազգագրության թանգարանի հավաքածուում»:

Այդ և հաջորդ օրը գիտաժողովի աշխատանքներն ընթացան մասնախմբերում: Լսվեցին «Շուշիի հնագիտական մշակույթը և ազգագրական միջավայրը», «Հայ գրատպությունը և պարբերական մամուլը Շուշիում», «Հոգևոր-եկեղեցական կյանքի և հայ արվեստի զարգացումը Շուշիում», «Շուշիի թատրոնը և նրա ներկայությունը Արցախի թատերական կյանքի պատմության մեջ», «Կարկառ քաղաքի հայտնաբերումը և ուսումնասիրության առաջին արդյունքները», «Շուշին ըստ 18-19-րդ դարերի քրիստոնեական ու մահմեդական գերեզմանատների վիմագրերի վկայության» և շատ այլ հետաքրքիր զեկուցումներ:

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեցին մասնախմբերի ղեկավարներն ու ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարը:

Վերջում գիտաժողովն ընդունեց հայտարարություն.

«Մենք՝ 2012 թվականի սեպտեմբերի 16-19-ը Շուշիում կայացած՝ հայկական գրատպության 500-ամյակին նվիրված «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ» միջազգային գիտաժողովի մասնակիցներս, պատմական անհերքելի իրողությունների ու գիտական հետազոտությունների հիման վրա փաստեցինք, որ.

Շուշի քաղաքը 19-րդ դարում դարձել էր Անդրկովկասի առևտրական, արհեստագործական ու մշակութային խոշորագույն կենտրոններից մեկը, որը հայ ժողովրդի ստեղծագործական քանքարի շնորհիվ առանցքային դեր է խաղացել Անդրկովկասի հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում: Գրեթե մեկ դար տևած մշակութային աննախադեպ վերելքը, սակայն, ընդհատվեց 1920 թվականի մարտի 23-ի սահմռկեցուցիչ դեպքերի հետևանքով, երբ թուրք-թաթարական (ադրբեջանական) զորքերի ու ամբոխի կողմից հրի մատնվեց հայկական թաղամասը՝ համամարդկային նշանակության իր հոգևոր-մշակութային կոթողներով ու արժեքներով, իսկ տքնաջան աշխատանքով ու ստեղծագործական հանճարով այդ ամենն արարած մարդիկ սրի քաշվեցին:

Խորհրդային տարիներին ադրբեջանական իշխանությունները հետևողականորեն ջնջում էին Շուշիի հայկական քաղաքակրթության հետքերը, իսկ 20-րդ դարի 90-ականների սկզբներին երբեմնի մշակութային կենտրոնը վերածեցին ռազմական հենակետի ու շրջակա բնակավայրերն անգթորեն ռմբակոծող կրակակետերի: Միայն 1992 թվականի մայիսի 9-ին Շուշիի ազատագրմամբ հնարավորություն ստեղծվեց քաղաքն ագրեսիայի մշտական կետից վերադարձնել քաղաքակրթային-մշակութային հուն:

Շուշիի մշակութային զարթոնքը, հիրավի, Արցախ աշխարհի հոգևոր-մշակութային նախընթաց զարգացումների արդյունքն էր, դարերի ընթացքում ձևավորված ավանդույթների տրամաբանական շարունակությունն ու խտացումը, հայկական վաղնջական մշակույթի արցախյան դպրոցի նոր խոսքը նրա ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական ոլորտներում:

Հայկական գրատպության 500-ամյա հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողովի անցկացումը Շուշի քաղաքում խորհրդանշական է, քանզի այն հանդիսացել է հայ մշակույթի, այդ թվում՝ գրատպության ու հրատարակչական գործի կենտրոններից մեկը:

Անթույլատրելի են այսօր էլ Ադրբեջանում պետականորեն կազմակերպվող ու խրախուսվող՝ Շուշի քաղաքի հայկական անցյալի և հոգևոր-մշակութային արժեքների կողոպուտը, պատմությունն անխղճորեն կեղծելու և նենգափոխելու, հայկական մշակութային ժառանգությունը սեփականելու փորձերը:

Իր երբեմնի քաղաքակրթական դիմագիծը և հայկական մշակույթի զարգացման գործում ուրույն դերը վերստանալու Շուշիի ապագան տեսանելի է, ինչը հնարավոր է դառնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյության պայմաններում և զարգացման ուղիների ու հեռանկարների հիմնավոր ուրվագծմամբ»:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ԱՐՑԱԽՅԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՎԵՐԱԾՆՆԴԻՆ

Վերջերս անսպասելի հեռախոսազրույց ունեցա իմ վաղեմի բարեկամի հետ: Վաղուց չէի լսել ինձ այնքան հարազատ ձայնը: Նամակագրական կապը խզվել էր մի 10 տարի առաջ: Դա իմ սիրելի բարեկամ, Կիրովականի (Վանաձոր) Հովի. Աբելյանի անվան պետթատրոնի դերասան Հայկ Թորոսյանն էր: Պարզվեց, որ աղջիկս՝ Տաթևը, համակարգչի միջոցով կապ է ստեղծել նրա հետ: Առիթը մեր ֆոտոալբոմի նկարներն էին և նրա նվիրած փոքրիկ գրքույկը հարազատ թատրոնի մասին: Միշտ էլ հետաքրքիր է, երբ ծանոթանում ես դերասանի հետ: Մանավանդ շատ ուրախացանք երբ տեղեկացանք, որ մեր Հայկը «Շանթ» հեռուստատեսության «Անծանոթը» հեռուստասերիալում մարմնավորում է քավորի դերը: Հիմա դիտում ենք «Անծանոթը» և հպարտանում նրանով:

Հիշեցի ակամա իմ դպրոցական տարիները: Վերջերս հաճախ եմ հուշերիս գիրկն ընկնում: Գուցե ծերանո՞ւմ եմ, կամ գուցե այն ժամանակներում կյանքն ավելի՞ հետաքրքիր էր: Հուսով եմ, որ երկրորդ պատճառն ավելի մոտ է ճշմարտությանը: Համաձայն եմ, ներկայումս շատ են գիտական նվաճումները, տեղեկատվական աղբյուրները նույնպես շատ են: Բայց այդ բազմազանությունում մենք շատ բան ենք կորցնում: Կորցնում ենք անմիջական շփումը միմյանց հետ, կորցնում ենք կապը հարազատների հետ, կորցնում ենք անմիջական շփումը թատրոնի հետ, կենդանի խոսքի և խաղի հետ:

Մեր դպրոցական տարիներին՝ 70-ականներին, մեզ մոտ հյուրախաղերի էին գալիս Հայաստանի լավագույն թատրոնների կոլեկտիվները: Եռուն և հարուստ էր նաև մեր մշակութային կյանքը: Ցերեկային ներկայացումներին ներկա էին քաղաքի բոլոր դպրոցների աշակերտությունը և մանկավարժական կոլեկտիվները: Երեկոյան ներկայացումները մտավորականության և աշխատավորության հանդիպման վայրն էր: Իսկ ինչպիսի՜ լռություն էր դահլիճում, ինչպիսի՜ կարգապահություն... Հյուրախաղերի եկած դերասանների և մեր աստղերի հետ կազմակերպվում էին հանդիպումներ: Եվ մենք մոտիկից շփվում էինք նրանց հետ: Այդպես էլ ծանոթացանք Հակոբ Ազիզյանի, Վահե Շահվերդյանի, Ռազմիկ Խոսրոևի և ուրիշների հետ: Իսկ Հայկի հետ բարեկամացա: Բարեկամացանք ընտանիքներով: Նրա միջոցով ավելի կապվեցինք թատրոնի հետ:

Ափսոսում եմ, որ մեզ պարտադրված պատերազմից հետո մեր թատրոնը ճգնաժամ ապրեց: Մարգո Բալասանյանի, Միքայել Հարությունյանի, Սուրեն Համզոյանի, Մամիկոն Միքայելյանի, Նվարդ Ասատրյանի, Սամվել Վիրաբյանի ֆիզիկական վախճանով կարծես «մահացավ» նաև արցախյան թատրոնը: Վերջերս «Ազատ Արցախ»-ի համարներից մեկում ընթերցեցի թատրոնի տնօրեն Կոմիտաս Դանիելյանի հարցազրույցը: Ուրախացա, որ մեր թատրոնը վերանորոգվելու է, խաղացանկ է ունենալու:

Ներկայիս դպրոցականը ծանոթ չէ թատրոնին, չգիտի իրեն պահելու ձևը դահլիճում, լռություն պահպանելը, ճիշտ խոսելը, տեղին ծիծաղելը: Ախր, թատրոնի միջոցով դաստիարակությունն առավել օգտակար է:

Վաղուց էի մտադրվել շոշափել այս ցավոտ հարցը մամուլի էջերում, հրավիրել բանավեճի: Մանավանդ, երբ ամռանը հնարավորություն եղավ դիտելու երիտասարդ ռեժիսոր Վեներա Ավագիմյանի (հետո իմացա, որ ժամանակավոր է այդ պաշտոնում) «Խոշոր շահում» ներկայացումը: Զարմացած էի դահլիճի լեցուն լինելուց: Վաղուց այդքան հանդիսատես չկար թատրոնում: Առաջնախաղից հետո մոտեցա երիտասարդ ռեժիսորին և դերասաններին՝ իմ հիացմունքը հայտնելու: Ցավով իմացա, որ դա նրա վերջին ներկայացումն է թատրոնում:

Հանդիսատեսն ապացուցեց, որ ինքը կարոտ է լավ ներկայացման: Վեներան էլ ապացուցեց, որ այս դժվար պահերին հնարավոր է լավ ներկայացում բեմադրել: Դա իմ սուբեկտիվ կարծիքն է, գուցե դուք է՞լ եք այդպես կարծում: Հնարավորություն տվեք մեր երիտասարդ ուժերին, և թատրոնը կապրի: Այցելեք մեր գյուղերը և ձեր ներկայացումներով ուրախացրեք ձեզ նվիրված հանդիսատեսներին:

Նախկինի պես աբոնենտային տոմսեր տվեք դպրոցներին, ուսանողությանը, աշխատանքային կոլեկտիվներին, բովանդակալից ներկայացումներ բեմադրեք, և թատրոնը կապրի: Լսեք իրար և հանուն արցախյան թատրոնի վերածննդի համախմբեք ձեր ուժերը, և թատրոնը կապրի՜:

Արցախցին սովոր է սպասելուն: Այսպես էլ սպասում ենք՝ հավատալով, որ կգա այն օրը, երբ մեր թատրոնի բեմում կբեմադրվեն նոր ներկայացումներ, և մենք կշտապենք դրանք դիտելու: Կծափահարենք և կողջունենք մեր դերասաններին ու կսպասենք նոր հանդիպման:

Մարիետա ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Իվանյանի միջն. դպրոցի
կենսաբանության ուսուցչուհի

ԹԱՏՐՈՆ

ՃԱՆԱՊԱՐՀ՝ ՓԱՌԱՎՈՐ ԱՆՑՅԱԼՈՎ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՀՈՒՅՍԵՐՈՎ

Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնը վաղուց ի վեր այդպիսի ջերմությամբ չէր լցվել, որպիսին սեպտեմբերի 19-ին էր: Եվ բանը միայն այն չէր, որ առաջնախաղ էր ներկայացվում: Ի սեր ճշմարտության պետք է ասել, որ ինչքան էլ հանդիսատեսը վերջին տարիներս հեռացած լինի թատրոնից, այնուամենայնիվ, մեկ-մեկ, հատկապես առաջնախաղերին թատրոն բերող ճանապարհը բանուկ է դառնում: Երկու հանգամանքով էր այդ օրը նշանավորված. նախ՝ որ բեմադրվում էր արցախցիների հպարտություն «Ռուզան» պատմական դրաման և երկրորդ՝ այն նվիրված էր հանրապետության թիվ մեկ մշակութային օջախի՝ Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի 80-ամյակին: Այս երկու հիշարժան իրադարձությունները մայրաքաղաքի թատերասեր էլիտայի օրը տոնական էին դարձրել և բոլորին բերել սիրելի օջախ՝ միասին վայելելու թատերական երեկոն:

Եվ այսպես, Ստեփանակերտի թատրոնը 80 տարեկան է: Հանդիսականներից շատերի աչքի առաջ է հասակ առել մեր թատրոնը: Նրանց համար քաղցր հուշ, իսկ նոր սերնդի համար հարուստ տեղեկատվություն էր Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի անցած ճանապարհը, որ ինչպես կինոժապավեն, հետ էին տալիս թատրոնի երիտասարդ դերասանները: Սիրելի անունները և այդ ամբողջ ընթացքում դահլիճում թևածող Ա. Խաչատրյանի հանճարեղ «Վալսը» հանդիսականներին մոռացնել էին տվել նստարանների անհարմարությունը, դահլիճի ոչ գեղադիտական տեսքը, և մտովի վերապրում էին Ստեփանակերտի դրամատիկականի արդեն հեռավոր հուշ դարձած երանելի ժամանակները՝ միևնույն ժամանակ ապրելով թատրոնի համար լավ ժամանակների հեռանկարը, մանավանդ որ, երեկոյի ընթացքում այդ հույսը մի քանի անգամ արթնացվեց պաշտոնյաների կողմից:

Մեր թատրոնի ապագայով շահագրգռվածների համար վերհիշենք մշակութային այդ օջախի անցած ճանապարհը: Այն ձևավորվել է 1932թ.՝ Կարո Ալվարյանի նախաձեռնությամբ: Նույն տարվա օգոստոսի 11-ին Վաղարշ Վաղարշյանի «Օղակում» պիեսի բեմադրությամբ առաջին անգամ բացվեց թատրոնի վարագույրը: Կարճ ժամանակում Արցախի թիվ 1 մշակութային օջախի համբավը տարածվեց հայրենի լեռնաշխարհում, ապա նաև Հայաստանում ու Կովկասի հայաշատ վայրերում, որտեղ Ստեփանակերտի հյուրախաղերը իսկական տոնի էին վերածվում:

Թատրոնի ստեղծագործական վերելքին նպաստել են հանրապետության ժողովրդական արտիստներ Արզո Արզումանյանը, Գուրգեն Հարությունյանը, Միքայել Կորգանյանը, Թագուհի Սահակյանը, Նինա Հովսեփյանը, Թամարա Մելքումյանը, Բենիկ Օվչյանը, Մարգո Բալասանյանը, Մամիկոն Միքայելյանը, Զինավուր Գևորգյանը, Նվարդ Ասատրյանը, Ժորա Մովսիսյանը, Միքայել Հարությունյանը, Ժաննա Գալստյանը, վաստակավոր արտիստներ Սուրեն Համզոյանը, Օվսաննա Սարգիսբեկյանը, Ռաֆայել Հարությունյանը, Արուս Ղազումյանը, Շուշիկ Գրիգորյանը, Ասյա Սիմոնյանը, Արֆենյա Հովհաննիսյանը, բեմադրիչներ՝ ժողովրդական արտիստ Իվան Հովհաննիսյանը, Հովհաննես Կարապետյանը, Արտաշես Հովսեփյանը, Լեոնիդ Հարությունյանը, Վահե Շահվերդյանը և էլի ուրիշներ, բեմանկարիչներ՝ արվեստի վաստակավոր գործիչ Գրիգոր Ծատուրյանը, Սամվել Հովհաննիսյանը, Մուշեղ Սաղյանը, Սարգիս Արուտչյանը և այլ երախտավորներ:

Թատրոնում ձևավորված լավագույն ավանդույթները շարունակեցին ժողովրդական արտիստուհի Ժաննա Գալստյանը, վաստակավոր արտիստներ Սամվել Վիրաբյանը, Ղարիբ Սարգսյանը, Ջուլիետա Ստեփանյանը, Սամվել Բաղինյանը, իսկ այսօր՝ թատրոնի ներկայիս համախումբը:

Արցախի դերասաններին ստեղծագործական խիզախումների են մղել հայ բեմի մեծագույն դերասաններ Իսահակ Ալիխանյանը, Արուս Ոսկանյանը, Ժասմենը, Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը և մեծն Փափազյանը, ում անունն է 1989-ից կրում Ստեփանակերտի թատրոնը:

Թատրոնի ստեղծագործական և աշխատանքային կոլեկտիվին և ողջ հասարակությանը հոբելյանի կապակցությամբ շնորհավորեց ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը՝ ի մասնավորի ասելով, որ Ստեփանակերտի դրամատիկականը տարբեր ժամանակներում գեղեցիկի արվեստի յուրօրինակ դպրոց է ներկայացրել ինչպես կարող ուժերի, այնպես էլ կայուն արվեստասեր հասարակության ձևավորման գործում: Ավելին, ժամանակի ընթացքում զուտ մշակութային օջախից այն վերածվել է ազգապահպան հայրենասիրության օջախի: Ցավոք, վերջին տարիներին նա ոչ դյուրին ժամանակներ է ապրում շենքային, կադրային և այլ առումներով: Չնայած դրան, կարողանում է հանդիսատեսի դատին պարբերաբար ներկայանալ ուշագրավ բեմադրություններով և բորբոք պահել արցախյան բեմի երախտավորների ավանդած ստեղծագործական կրակը: Աժ խոսնակի հավաստմամբ՝ հանրապետության իշխանությունները, բնականաբար, վաղուց մտահոգված են մեր երկրի մշակութային գլխավոր օջախի խնդիրներով՝ փորձելով հնարավորինս թեթևացնել նրա հոգսերը: Նա լավատեսորեն ակնարկեց, որ թատրոնի վերանորոգման հարցը վերջապես ստանում է իրական լուծման հեռանկար:

Կարո Ալվարյանն ու ստեղծագործական համախումբը կոչված էին ստեղծելու ազգային թատրոն՝ իհարկե չմոռանալով համաշխարհային դասականների ու ժամանակակից հեղինակների լավագույն գործերը: Մեր երախտավորների մտահղացումները արժանվույնս իրագործելով՝ Ստեփանակերտի թատրոնը մինչև 1990-ական թվականներն իրավամբ համարվում էր ինչպես հայ, այնպես էլ Հարավկովկասյան տարածաշրջանի լավագույն թատերական կոլեկտիվներից մեկը:

Դժբախտաբար, պատերազմը ինչպես ամենուր, իր անողոք կնիքն է դրել մեր թատրոնի վրա: Սակայն նա շարունակում է կատարել ժողովրդին ծառայելու իր պատվաբեր, բայց ոչ դյուրին առաքելությունը: Ուրախալի է, որ թատերախումբը վերջին տարիներին համալրվել է երիտասարդ կարող ուժերով:

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը նկատեց, որ թատրոնի 80-ամյակի տոնակատարությունը «Ռուզան»-ի նոր բեմադրությամբ համընկել է Ստեփանակերտի թատրոնում նույնանուն դրամայի բեմադրման 50-ամյակին ու դրանում պատահական ոչինչ չտեսավ. ի վերջո, ամեն ինչ վերադառնում է ի շրջանս յուր: Նա շնորհակալություն հայտնեց թատրոնի լավ բարեկամներին, ովքեր նույնպես իրենց պատրաստակամությունն են հայտնել և միշտ թատրոնի կողքին են, որոնցից է ՀՀ ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանը, ով ընդունելով հրավերը, իրականացրեց «Ռուզան»-ի նոր բեմադրությունը: Նախարարության անունից Ն. Աղաբալյանը նրան հուշանվեր մատուցեց: Նախարարը մեկ այլ հաճելի առաքելություն էլ կատարեց: Նվերով շնորհավորեց Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի տնօրեն, արձակագիր Կոմիտաս Դանիելյանին, որի ծննդյան 65-ամյակը լրացավ օրերս:

Թատրոնի հոբելյանը շնորհավորելու էր եկել Հայաստանի թատերական գործիչների միությունը՝ նախագահ Հակոբ Ղազանչյանի գլխավորությամբ, ՀՀ վաստակավոր արտիստ և վաստակավոր գործիչ Լևոն Մութաֆյանը, մայր թատրոնի ժողովրդական արտիստ Կարեն Ջանիբեկյանը և ուրիշներ:

Լևոն Մութաֆյանի հայացքով, Ստեփանակերտի թատրոնը 140 և 80 տարեկան է. Ստեփանակերտի թատրոնի պատմությունը նա չի տարանջատում Արցախի թատրոնի, Շուշիի թատրոնի պատմությունից: Վահրամ Փափազյանի անվան թատրոնը շարունակողն է այն հրաշալի ավանդույթների՝ հերոսական ճանապարհ անցած, որի մասին դեռևս 19-րդ դարավերջին Հարավային Կովկասում հայտարարեցին, որ ձևավորվել է մշակութային մի լավ հանգրվան: Ստեփանակերտի թատրոնը Ադրբեջանի տարածքում ստեղծված երրորդ հայկական թատրոնն էր: Այսօր այն պարունակում է այն լավագույն ավանդույթները, որ կային Բաքվում, Գանձակում, ասել է թե՝ մի ողջ տարածաշրջանում: Մայր թատրոնն իր փառավոր ավանդույթներով, կենսագրությամբ անցյալի թատրոնների յուրատեսակ հանգրվաններից մեկն է դարձել՝ իր խաղացանկով, դերասանական խաղով, ռեժիսորական դրսևորումներով: Հետևաբար, երբեք ազգային թատրոնի պատմությունից չի անջատվել Ստեփանակերտի թատրոնը, ընդհակառակը՝ Լ. Մութաֆյանի հավաստմամբ, այն գտնվում է Հայաստանի թատերական գործիչների միության ուշադրության կենտրոնում: Մեկ տարի առաջ այստեղ կազմակերպվեց «Արմոնոն» թատերական փառատոնը: Նա տեղեկացրեց, որ հաջորդ տարի Արցախում իր վարագույրը կբացի միջազգային թատերական փառատոնը, ուր հանդես կգան աշխարհի շատ թատրոններից հրավիրված դերասաններ, ինչը հարգանքի հավաստում է մեր թատրոնին: Թատերական գործիչն իր ելույթը եզրափակեց կոչով՝ եթե ուզում ենք, որ աստեղ մայրենին երբեք չկորչի, ապա գանք թատրոն, որովհետև ազգային ինքնության պահպանման լավագույն միջոցներից մեկը թատրոնն է:

Թատերարվեստին մատուցած ծառայությունների և թատրոնի 80-ամյակի կապակցությամբ թատերական գործիչների միության ոսկե մեդալով պարգևատրվեցին հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը, թատրոնի տնօրեն Կոմիտաս Դանիելյանը, վաստակավոր արտիստուհիներ Արեգա Պետրոսյանը, Արմիդա Գաբրիելյանը, Արմելա Առաքելյանը, արտիստ Մարտին Ալոյանը:

80-ամյա թատրոնի ամենամեծ դերը նաև սերունդներին հայեցի դաստիարակելու մեջ է: Եվ սխալված չենք լինի ասել, որ Արցախի ազգային-ազատագրական շարժման և մեզ պարտադրված պատերազմում տարած հաղթանակի մեջ իր արժանի ներդրումն ունի նաև մեր թատրոնը: Այսօր էլ շարունակվում է փափազյանցիների համագործակցությունը Պաշտպանության բանակի հետ, ինչի վկայությունը զինվորների համար պարբերաբար տրվող ներկայացումներն են:

Կուլ չգնալով սովետական ինտերնացիոնալիզմի կեղծ դրույթներին ու Ադրբեջանի իշխանությունների ճնշմանը, Ստեփանակերտի թատրոնը համարձակորեն դիմել է ազգային թատերգությանը՝ բեմ բերելով հայ տիպական կերպարներ, և պատահական չէ, որ թատրոնի 80-ամյա խաղացանկում տեղ գտած 414 ներկայացումների մեջ առյուծի բաժին են կազմում հայ հեղինակները: Ավելին, կյանք ստացավ արցախյան թատերգությունը: Այդ հեղինակներից են Բագրատ Ուլուբաբյանը, Վազգեն Օվյանը, Վարդան Հակոբյանը, Իսահակ Ալավերդյանը, Կոմիտաս Դանիելյանը և ուրիշներ:

«80-ը պատկառելի թիվ է, բայց համոզված եմ, որ թատրոնի և մարդու տարիքների միջև կա մի էական տարբերություն. թատրոնը տարիների հետ գնալով ոչ թե ծերանում, այլ ընդհակառակը, երիտասարդանում է»,- ասաց ԼՂՀ գրողների միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը՝ ցանկանալով այդպիսին տեսնել Ստեփանակերտի թատրոնը: Հայ գրականությանը և թատերական արվեստին մատուցած ծառայությունների և ծննդյան 65-ամյակի կապակցությամբ Արցախի գրողների միության պատվոգրով նա պարգևատրեց թատրոնի տնօրեն, արձակագիր Կոմիտաս Դանիելյանին:

Իր հերթին ելույթ ունենալով և շնորհակալություն հայտնելով բարի խոսքերի ու պարգևների համար՝ Կոմիտաս Դանիելյանը վստահեցրեց, որ ի տրիտուր այդ ամենի, թատերախումբը կանի ամեն ինչ, որպեսզի հաջողությամբ կատարի իր վրա դրված ոչ դյուրին առաքելությունը: Թատրոնի ղեկավարությունը նույնպես նվերներ էր պատրաստել. «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամի հովանավորությամբ՝ 80-ամյակի սեղանի հոբելյանական հուշամեդալ, որով պարգևատրվեցին ինչպես թատրոնի երկարամյա աշխատողները, այնպես էլ թատրոնին ինչ-ինչ ծառայություններ մատուցած, ինչ-ինչ ձևով աջակցող անձինք. նրանց թվում՝ ԼՂՀ Աժ նախագահ Ա. Ղուլյանը, նախարար Ն. Աղաբալյանը, Վանաձորի Հ. Աբելյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Վահե Շահվերդյանը՝ «Ռուզան» ներկայացման համար, Հակոբ Ղազանչյանը, Վարդան Հակոբյանը, նախկին դերասանուհի, Աժ պատգամավոր Ժաննա Գալստյանը:

Ուրախություն ապրելով, որ այդ հանդիպումը թատրոնի շենքի հիմնանորոգումից առաջ վերջինն է լինելու, նրա երկրպագուներին մնում էր հուսալ, որ մոտ ապագայում կունենանք հաղթանակած երկրին համահունչ թատրոն:

Երեկոն ավարտվեց «Ռուզան» պատմական դրամայի նոր բեմադրության առաջնախաղով: Ներկայացումը, որի մեջ ընդգրկված էին նաև երիտասարդ շնորհալի դերասաններ, այդ հույսը ցանկալի իրականությունը մոտ դարձրեց:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԷՋ

ԴԵՊԻ ԿԱՐՍ...

(Պատմվածք)

Կոմիտաս ԴԱՆԻԵԼՅԱՆ



Ինչքա՜ն արագ է անցնում ժամանակը... Հինգ տարի առաջ առիթ ունեցա շնորհավորելու իմ տաղանդաշատ գրչընկերոջը վաթսունամյա հոբելյանի առթիվ և ահա նորից հոժարությամբ ողջունում եմ նրան ծննդյան 65-ամյակի կապակցությամբ:

Գրողի համար հոգու թե՛ տեղատվության և թե՛ մակընթացության պահերը սովորաբար հագեցած են լինում ստեղծագործական լիցքերով, և հենց դրանով է թերևս շեշտվում նրա արարման մշակութային արժեքը: Այս առումով Կոմիտաս Դանիելյանն ապրում է ստեղծագործական լիարժեք կյանքով, որովհետև նույն ավյունով շարունակում է գրքեր գրել ու հրատարակել, Արցախի մայր թատրոնն է ղեկավարում և հայ բեմի համար գրում է հրաշալի պիեսներ: Ինչպես ասում են, եթե անցնող օրվա վարագույրների միջով ետհայաց նայենք՝ ափսոսալու տեղ չունենք: Ընթերցողի համար նա միշտ ասելիք ունի՝ կոմիտասդանիելյանական անպաճույճ ոճով, խոսքի նպատակամետությամբ ու ապրված փիլիսոփայությամբ:

Վաթսունամյակի առթիվ հնչեցրած այն միտքը, թե Դանիելյանի գրական վաստակին ամփոփիչ գնահատական տալը դեռ վաղ է, քանզի հոբելյանական նորանոր մաղթանքներ հղելու առիթներ էլի ենք ունենալու, հիմա էլ դարձյալ «օրակարգային» է: Ի վերջո, շատ չէ, գրողն ընդամենը դարձել է 65 տարեկան:

Ինձ մնում է միայն շնորհավորել ու արևշատություն ցանկանալ նրան: Եվ դա անում եմ ամենայն սիրով ու պատասխանատվությամբ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Խմբագրության կողմից.- «Լուսարար»-ը սիրով միանում է շնորհավորանքին:

1965 թվականը Ն... գյուղի համար նշանավորվեց երկու անակնկալով, եթե կարելի է այդպես արտահայտվել, մեկն ուրախ, մեկը՝ ոչ ուրախ: Այստեղ գրեթե միաժամանակ բացվեցին կոշկի նորոգման արհեստանոց և միլիցիայի տեղամասային տեսչություն, ինչը կատարյալ շռայլություն կարելի էր համարել նման բնակավայրի համար, որտեղ հազիվ երեքուկես հարյուրյակ մարդ էր ապրում: Շտապեմ ավելացնել, որ թե՛ մեկը և թե՛ մյուսն ընդամենը մի տարվա չափ կյանք ունեցավ: Չեմ հիշում որն առաջինը բացվեց, գիտեմ միայն, որ նախ կոշկակարը հրաժեշտ տվեց գյուղին, ապա, որոշ ժամանակ անց, տեսչի հաստիքը կրճատվեց:

Այս գյուղն իր կենցաղավարությամբ կամ գուցե նաև մի ուրիշ բանով առանձնանում, առնվազն կես քայլով առաջ էր շրջակա մեծ ու փոքր գյուղերից, և դա ոչ այնքան իրենց՝ տեղացիների, որքան այդ շրջակա մեծ ու փոքր գյուղերի բնակչության կարծիքն էր, ինչի համար, ամենայն հավանականությամբ, հիմք էին ծառայում ողջ ենթաշրջանին սպասարկող՝ տեղի փոստի և խնայդրամարկղի բաժանմունքները, հեռախոսահանգույցը, հիվանդանոցը, ալրաղացը, անասնաբուժական կայանը, որին «պունկտ» էին ասում, հիմա էլ՝ միլիցիայի տեսչության առկայությունը:

Պիտի ասել, որ այս ամենով հանդերձ, տեղացիները բավականին օրինապահ, ավանդապաշտ, շառից հեռու ժողովուրդ են, ու պատահական չէր, որ նրանք խիստ զարմանքով ու նույնքան տհաճությամբ ընդունեցին միլիցիայի տեսչություն ունենալու լուրը («Աչքներս լույս»,- ասացին), որովհետև նրանցից ոչ ոք չէր հիշում գոնե մի չնչին դեպք, երբ սովետական իշխանության անցած 40-45 տարիներին իրենք փոքրիշատե իրավապահների միջամտության կարիքն զգային, ի տարբերություն հարևան մի քանի գյուղերի, ուր հարսանյաց հանդեսներն ու համանման մյուս միջոցառումները, որպես կանոն, Բաքոսի նվիրյալները եզրափակում էին թունդ տուրուդմփոցով:

Առավել զարմանալին, ինչու չէ, նաև վիրավորականն ու զայրացուցիչն այն էր, որ միատարր, հարյուրտոկոսյա հայ բնակչություն ունեցող գյուղերի համար ուղարկված տեսուչն այլազգի էր, և որ նա, մյուս բոլոր անբնակ տները թողած, պիտի հանգրվաներ ոչ այլուր, քան Պրսեղանց՝ ՊԱԿ-ի փոխգնդապետ Բադալյանցի աներոջ՝ նույնպես թափուր տանը... Քանի որ նման բաների մասին ընդունված չէր բարձրաձայնել, գյուղացիներին մնում էր այդ վիրավորանքն ու զայրույթը, ինչքան էլ դառը լինեին, կուլ տալ լռելյայն: Ինչպես շատ ու շատ անգամ է եղել՝ ամենատարբեր պատճառներով:

Միլիցիայի տեսուչը, որ ուսադիրներին երկու կամ երեք փոքրիկ աստղիկ ուներ, ջահելությունը վաղուց հետևում թողած, չեչոտ, վանող դեմքով հաղթանդամ թուրք էր, թե՞ քուրդ: Նրանից երևի թե կարգին չոբան ստացվեր, բայց ալլահի կամեցողությամբ հաջողվել էր իշխանական հագուստ-կապուստ կրել: Քրոմե պլպլան սապոգներ էր հագնում՝ պա՜հ, պա՜հ, պա՜հ և քայլում էր գեներալի պես, թեպետ նրան ավելի շատ ձիու թամբին կարելի էր տեսնել՝ գյուղից գյուղ երթևեկելիս: Զբոսաշրջիկի նման: Գյուղխորհրդի իր աշխատասենյակում հազվադեպ էր լինում՝ առիթից առիթ: Քիչ է ասել, թե սիրում էր կերուխումը, աղմկոտ հարսանիքները, որոնց մշտական, թերևս ամենաակտիվ մասնակիցն էր: Սիրտն ուզածի չափ կոնծում էր, սիրտն ուզածի չափ պարում. կանաչավուն, մանրիկ աչքերը կիսախուփ, ոսկյա ատամնաշարը՝ բաց, սեփական բախտից անսահման գոհ, երջանիկ: Ինչպես բաստուրմա կերած կատու: Մեկ-մեկ էլ, հենց պարելու ընթացքում ատրճանակը հանում էր և՝ թա՛խկ, թա՛խկ, թա՛խկ, կրակում օդում:

Կոշկակարը 26-27 տարեկան, ամրակազմ ու պայծառադեմ երիտասարդ էր՝ հարևան Բ... մեծ գյուղից և իր ասելով՝ Թիֆլիսում էր սովորել այդ արհեստը, Հավլաբարի հայ վարպետների մոտ: Հավանաբար, այդ պատճառով էին նրա գլխավերևում Սիմոնյանի, Պելեի և Մարգարովի նկարների հարևանությամբ հանգրվանել վրաց նշանավոր ֆուտբոլիստների նկարները՝ Խուրցիլավա, Մեսխի, Մետրևելի... «Եթե Մարգարովը Բաքվից տեղափոխվի Երևան,- ասում էր նա,- «Արարատը» մեկ-երկու տարուց հաստատ չեմպիոն կդառնա: Մերոնք կենտրոնական ուժեղ հարձակվող չունեն»: Տարիներ անց իսկապես այդպես էլ եղավ. հայոց համերաշխ թիմը հաղթող ճանաչվեց ԽՍՀՄ առաջնությունում, միաժամանակ նվաճեց երկրի գավաթը, ինչը երբեք, ոչ դրանից առաջ, ոչ հետո, չի հաջողվել հարավկովկասյան, և ինչու միայն, որևէ ակումբի:

Սոսկ ֆուտբոլի երկրպագու չէր կոշկակարը: Գյուղամիջի՝ վարսավիրանոցին հարող փոքրիկ անշուք սենյակը, որ նրան էր տրամադրվել որպես արհեստանոց, մի կատարյալ պատկերասրահի էր վերածվել: Ի տարբերություն այդ տարիներին ամենուրեք տարածված սովորության, երբ կոշկի վարպետները գերադասում էին իրենց շրջապատել հանրահայտ երգչուհիների և կինոդերասանուհիների՝ հայտագրերից ու գունազարդ ամսագրերից պոկած նկարներով, այստեղ կողք կողքի խնամքով փակցված էին հայ երևելիների՝ երևի այդ նպատակով, գուցե հենց Թիֆլիսում հատուկ պատրաստած մեծադիր լուսանկարները. Ռաֆֆի, Մուրացան, Թումանյան, Կոմիտաս, Լեո, Չարենց, Ստեփան Շահումյան, Վազգեն Առաջին, Վիկտոր Համբարձումյան, Վահրամ Փափազյան, Մարտիրոս Սարյան, Արամ Խաչատրյան, Տիգրան Պետրոսյան, Վլադիմիր Ենգիբարյան, Սերգո Համբարձումյան... Իսկ ամենավերևում մարշալ Բաղրամյանն էր՝ ազնվացեղ նժույգի վրա, ու մեր մյուս մարշալները, ապա՝ Անդրանիկի հայտնի նկարը՝ գեներալական համազգեստով, կողքին՝ ֆիդայական բեղերով ու հրացայտ աչքերով անծանոթ մեկը՝ քաղաքացիական հագուստով:

- Խմբապետ Թևանն է,- բացատրում էր նա՝ ի տրիտուր ներկաների անտեղյակության՝ հանդիմանորեն օրորելով գլուխը:- Արցախի հայությունը, հատկապես Դիզակն ու Վարանդան, իրենց գոյության համար նրան են պարտական՝ տումեցի Թևան Ստեփանյանին:

Իսկ միլտեսչին, որը երբեմն-երբեմն արհեստանոց էր գալիս սապոգների գամերը փոխելու պատրվակով, Թևանի մասին ասել էր՝ մորեղբայրս է, ժամանակին Չապաևի դիվիզիայում է կռվել: Տեսուչը հավատացե՞լ, թե՞ չէր հավատացել, բայց գովել էր՝ աֆերիմ, հալալ լինի,- ապա մատը մեկնել էր Անդրանիկ Օզանյանի նկարին, վստահաբար հարցրել.

- Ստալինն է, չէ՞: Իսկ ինչո՞ւ Լենինի նկարը չկա:

- Մի՞թե կոշկակարանոցը վայել է մեծ առաջնորդին,- պատասխանել էր կոշկակարը:

Այդ տարիներին Անդրանիկի և Թևանի մասին արգելված էր ծպտուն հանել, մինչև իսկ թույլ չէր տրվում նորածին երեխաներին կոչել այս անուններով: Այնպես որ, կոշկակարի վարմունքն ավելի քան խիզախություն կարելի էր որակել:

Նա մի անզուսպ քամահրանքով էր խոսում «ժողովուրդների հոր»՝ Ստալինի մասին, որը թեև պետականորեն վարկաբեկված էր, սակայն ժողովուրդը, թող ներվի, հոտային բնազդով շարունակում էր ակնածանք տածել այդ մեծագույն դահճապետի հանդեպ:

- Ստալին-Ջուղաշվիլին՝ «այդ նեղճակատ կինտոն» է մեզ էս օրին հասցրել,- ասում էր նա՝ ձեռքի մուրճը թափով վար բերելով:- Շահումյանին նա է մատնել: Ստալինն է սպանել տվել Սպանդարյանին, Կնունյանցին, Մյասնիկյանին, Կամոյին, Աղասի Խանջյանին, Սահակ Տեր-Գաբրիելյանին... Չի խնայել անգամ հիվանդ, անկողնուն գամված Վահան Տերյանին. ձմռան բքին վերցրել, գործուղել է Սիբիր: Եվ մեր ամենաքնքուշ բանաստեղծն իր մահկանացուն կնքել է հեռավոր, ցրտաշունչ Օրենբուրգում:

- Ինչո՞ւ,- հարցնում էին գյուղացիները,- ինչի՞ համար պիտի Ստալինն այդպես վարվեր:

- Ինչո՛ւ, ինչի՛ համար,- կծու քմծիծաղ էր տալիս կոշկակարը,- որովհետև վրեժ ուներ հայերիս նկատմամբ: Ստալինի իսկական հայրը հայ է եղել, մի հարուստ գործարանատեր: Սա կենակցել է իր վրացուհի հավաքարարուհու հետ, երբ բանը բանից անցել է, գործարանի բանվորներից մեկին՝ Ջուղաշվիլի Վիսարիոնին, ստիպել է ամուսնանալ այդ սիրուն վրացուհու հետ: Այս մասին հետագայում գրել է Ստալինի աղջիկը՝ Սվետլանա Ալելուևան: Դա Անաստաս Միկոյանին էլ էր հայտնի:

Ասում էր՝ հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանին քանաքեռցի թուրքերն են սպանել՝ Միրզա Ֆաթալի Ախունդովի հանձնարարությամբ, որը մի ժամանակ Թիֆլիսում Աբովյանի ձեռքի տակ էր աշխատում. Շիրվանզադեն, խոշոր գրող լինելով հանդերձ, ամբարիշտ մարդ էր, ատում էր Լեոյին ու Մուրացանին: Սուրեն Սպանդարյանի հայր Սպանդարը Մուրացանի կնոջ՝ Ոսկեհատի սիրեկանն էր, և այդ մասին գիտեին Լենինն ու Կրուպսկայան. Բաքուն ու Թիֆլիսը հայերն են կառուցել, և մինչև սովետական կարգերը վերջինիս քաղաքագլուխները միշտ հայեր են եղել. Մանթաշյանն է կառուցել տվել Բաքու-Բաթումի նավթամուղը. Քաջազնունին, որը Հայաստանի առաջին հանրապետության վարչապետն էր, Լեոյի վկայությամբ՝ իր մոտ աշխատող ոմն գյուղատնտեսի խորհրդով ուզում էր Ղարաբաղի հայերին տեղափոխել Արարատյան դաշտավայր՝ որպես «պրոիզվոդիտել», Ղարաբաղը հանձնել Ադրբեջանին:

Գյուղացիների վրա ցնցող տպավորություն է թողել հատկապես Կարս բերդաքաղաքին առնչվող պատմությունը:

- Աշխարհի ճնշված ժողովուրդների հանճարեղ առաջնորդ ընկեր Լենինը,- պատմում էր նա,- Կարսը նվիրել է թուրքերին, որպեսզի նրանք բռնեն սոցիալիզմի ուղին: Թուրքերը, գիտեք, չուզեցին մարքսիստ դառնալ: Լենինը կարող էր, չէ՞, հետ պահանջել Կարսը, բայց չարեց: 1943թ. Թեհրանի կոնֆերանսում Չերչիլը առաջարկել է վերականգնել ԽՍՀՄ-ի 1914թ. սահմանը: Ստալինը չի համաձայնվել: Ասել է՝ Կարսը ինչի՞ս է պետք, ինձ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներն են պետք: Այդուամենայնիվ, 1945թ. կեսերին իր զորքերին հրամայել էր պատրաստվել Կարսի մարզը գրավելու: Նույնիսկ պարետ էր նշանակել: Երբ հարձակմանը երկու ժամ էր մնում, նոր հրաման է տալիս՝ չանցնել սահմանը: Չնայած դրան, Ախալքալաքում տեղակայված տանկային գունդը գնդապետ Բաբայանի հրամանով առաջ է շարժվում, խորանում 20 կիլոմետրով: Տեսնելով, որ մյուս զորաջոկատները չեն հետևում իրեն, Բաբայանը ստիպված տանկերը հետ է դարձնում: Այս ինքնագլուխ քայլի համար նրան գնդակահարում են: Մի քանի տարի առաջ էլ, 1960 թվականին ամերիկահայ մեծահարուստները Թուրքիայի հետ պայմանավորվել էին գնել Կարսի մարզը՝ ԱՄՆ-ի թուրքական պարտքերը վճարելու դիմաց: Այդ մասին տեղեկանալով՝ Խրուշչովը սպառնացել է զորք մտցնել Կարս, եթե փորձեն այն վաճառել արևմտահայերին: Այսպիսով, Կարսը երեք անգամ կարող էր մեզ վերադարձվել, բայց մնաց կարմիր գծից անդին...

Նման հազար ու մի պատմություններ էր անում կոշկակարն իր կոշկակար տեղով և ամեն անգամ, հայացքը կտրելով ծնկներին դրված հերթական նորոգվող կոշկից, մտերմիկ ժպիտով, կատակ անելու պես ավելացնում էր՝ դեպի Կարս, պարոնայք, դեպի Կարս...

Նրա արհեստանոցը միշտ մարդաշատ էր լինում, մանավանդ, ձմռան երեկոներին, երբ մարդիկ, ուրիշ անելիք չունենալով, ժամանակ սպանելու համար գալիս խմբվում էին կամ այդտեղ, կամ վարսավիրանոցում: Ջահելները, հարկավ, նախընտրում էին կոշկակարանոցը:

Ի տարբերություն օրենքի լիազորի՝ կոշկակարը սակավապետ էր, զվարճալիքներից հեռու: Օրն ի բուն գլուխը կախ՝ իր գործին էր. կոշիկ էր նորոգում կամ նորերն էր կարում, եթե պատվիրողներ լինում էին: Եվ բոլորը գոհ էին նրանից՝ մեծ ու փոքր: Բոլորը զարմացած, հիացած էին նրա՝ վերջ չունեցող արտասովոր պատմություններով, նույնիսկ՝ ուսուցիչները: Իսկ դպրոցի տնօրենն ասել է՝ այդ տղան կոշկակարանոցում նեղվում է, ափսոս, սխալ մասնագիտություն է ընտրել:

Ու մի օր էլ կոշկակարն ընդմիշտ հեռացավ գյուղից: Տեղի ջահելներն իրենց պարտքը համարեցին փոքրիշատե հանդիսավորել նրա հրաժեշտը: Հավաքվեցին գյուղադեմի ճանապարհամերձ նշանավոր տանձենու տակ, որն, ափսոս, հիմա չկա և մի իսկական տոնախմբություն կազմակերպեցին: Ասես գործող բանակ էին ճամփում իրենց հարազատին: Այստեղ էլ, ինչ խոսք, կենտրոնական դեմքը նա էր, այստեղ էլ բոլորին զարմացրեց իր արտակարգ ձայնով, անսովոր երգերով, կինտոյական պարերով: Մի խոսքով՝ կոշկակարն այդ օրը նման չէր իրեն: Ն... գյուղում դեռևս հիշում են այդ եզակի երեկոն, պատառիկներ՝ նրա կատարած ուրախ-զվարթ երգերից:

Կոշկակարին այլևս չտեսան:

Տարիներ անց շշուկներ տարածվեցին, թե իբր վերադարձել է Թիֆլիս, ուր և զոհվել է ավտովթարից: Ավելի լավատեղյակները պնդում էին, թե բռնել տարել էին Բաքու՝ ազգայնական հայացքների պատճառով, և դրանում խառն էր տեղամասային տեսչի մատը: Ի՜նչ իմանաս՝ ո՛րն է ճիշտը:

Մի բան, սակայն, ակնհայտ է. Ն... գյուղում կոշկակարը չի մոռացվել, թեպետ ավելի քան չորս տասնամյակ է անցել: Ու երբ գյուղամիջում ինչ-որ մեկի շուրթերից ինչ-ինչ առիթով Կարսի անունն է հնչում, հասակավոր գյուղացիների աչքերը տամկանում են, ու նրանց հայացքներն ինքնաբերաբար շրջվում են դեպի երբեմնի արհեստանոցը, որը մինչ այսօր փակ է մնում:

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս»
ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3205: Ծավալը՝
տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 26.09.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ:

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2012 թվականի օգոստոսի «23»-ի
Պետականգրանցման համարը 10512126
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ն. Նարիմանյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
«16» օգոստոսի 2012 թվականի N 145/Ն
ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
«18» օգոստոսի 2012 թվականի N 246 -Ն
ք. Ստեփանակերտ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ, ԱՎԱԳ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 512-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հաստատել՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս. Ասրյանին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Կարապետյանին:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի զորամասերի պետերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և
գիտության նախարարի
2012 թվականի
օգոստոսի 16-ի N 145/Ն
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի
օգոստոսի 18-ի N 246 - Ն
համատեղ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ, ԱՎԱԳ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 161 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 512-Ն որոշման 2-րդ կետի համաձայն և նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) սովորողների նախազորակոչային պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու համար:

2. Ուսումնական հաստատությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից) սովորողների նախազորակոչային պատրաստությունն իրականացվում է «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կանոնադրության համաձայն պատանիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում ծառայության նախապատրաստելու նպատակով:

3. Ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստությունն իրականացվում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպման միջոցով:

4. Ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստության» հիմնական խնդիրներն են՝

1) ապահովել սովորողների կողմից «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումը,

2) սովորողներին պարզաբանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի խնդիրները, առանձնահատկությունները ու նշանակությունը,

3) սովորողների մեջ դաստիարակել ազգային բանակում ծառայելու անհրաժեշտության զգացումը,

4) կազմակերպել զինվորական երդման, համազորային կանոնադրությունների պահանջների ուսումնասիրում և դաստիարակել դրանք անվերապահորեն կատարելու պատրաստակամություն,

5) պատանիներին ծանոթացնել զորամասերի ռազմական անձնակազմի կյանքին ու կենցաղին, զենքին ու զինվորական տեխնիկային,

6) տեսական և գործնական պատրաստության միջոցով իրականացնել սովորողների շարային և հրաձգային պատրաստությունը,

7) սովորողներին զինել անհրաժեշտ ռազմական գիտելիքներով, ապահովել մարտավարության ու քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի հիմունքների յուրացումը,

8) սովորողների մոտ ձևավորել ռազմակիրառական կարողություններ, հմտություններ, կամային բարձր հատկանիշներ, առաջին բուժօգնություն, ինքնօգնություն, փոխօգնություն ցուցաբերելու ունակություն,

9) սովորողների մոտ ձևավորել քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով գործելու, պաշտպանական կառույցներից և անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու ունակություն, արտակարգ իրավիճակներում գործելու հմտություն և անհրաժեշտ վարվելակերպ,

10) դաստիարակել հայոց բանակի պատմական ավանդույթներին ծանոթ, ֆիզիկապես և բարոյապես առողջ, դիմացկուն, բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ պատանիներ և աղջիկներ,

11) սովորողների շրջանում իրականացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանք՝ ըստ նախասիրությունների ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով:

5. Ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան դասավանդում է զինվորական ղեկավարը, իսկ առաջին բուժօգնության հիմունքների դասավանդումը իրականացվում է բժիշկների, միջին բուժանձնակազմի, պետական հումանիտար բուհերի քաղաքացիական պաշտպանության պահեստազորի միջին բուժանձնակազմի վկայական ունեցող շրջանավարտների (որոնք ունեն առաջին բուժօգնություն դասավանդելու իրավունք), ինչպես նաև առաջին բուժօգնության վերապատրաստման դասընթացներ անցած և համապատասխան որակավորում ստացած զինվորական ղեկավարների միջոցով:

6. Սովորողների հետ տարվող ռազմահայրենասիրական աշխատանքն ընդհանուր դաստիարակչական աշխատանքի բաղկացուցիչ մասն է և իրականացվում է պլանավորված կարգով՝ դասղեկի, մյուս մանկավարժների և զինղեկի կողմից՝ տնօրենի ղեկավարությամբ:

II. ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման ընդհանուր ղեկավարումն ու հսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրա- ☞ 10

ԽՈՍՔ

պետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության, այլ շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ մշակում են հրամաններ, հրահանգներ, ուսումնական ծրագրեր, մեթոդական և այլ նորմատիվ փաստաթղթեր, միջոցառումների պլաններ, որոնք առնչվում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացմանը, կազմակերպում և ուսումնասիրում են սովորողների հետ տարվող ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի և «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման որակը՝ համաձայն սույն կանոնադրության 7-րդ գլխի և ենթահավելվածի:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝

1) իրականացնում է սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման ընդհանուր ղեկավարումը,

2) ապահովում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների անցկացման անհրաժեշտ մակարդակը,

3) համակարգում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրերի, դասագրքերի, հաշվետախտակի, հրահանգների հանձնարարականների, մեթոդական և այլ նորմատիվ փաստաթղթերի մշակման և ներդրման աշխատանքները,

4) կազմակերպում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ ուսումնադիտողական նյութերի մշակումն ու հրատարակումը,

5) ուսումնասիրում, ընդհանրացնում և տարածում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման աշխատանքի դրական փորձը, նյութական և բարոյական խրախուսանքի արժանացնում լավագույն ուսումնական հաստատություններին և աշխատողներին, կազմակերպում է «Լավագույն զինղեկ» մրցույթը,

6) մասնակցում է զինղեկների, առաջին բուժօգնության հիմունքներ դասավանդողների որակավորման բարձրացման աշխատանքներին, անցկացնում է նրանց ատեստավորումը,

7) մշակում է զինղեկների պատրաստման, վերապատրաստման և ատեստավորման կարգը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ,

8) ղեկավարում և վերահսկում է սովորողների ֆիզիկական պատրաստության վիճակը, մեթոդական օգնություն է ցույց տալիս ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներին և զինղեկներին ուժային վարժությունների անցկացման հարցերում,

9) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության հետ համատեղ կազմակերպում և անցկացնում է ռազմամարզական խաղեր, մրցումներ, գիտակրթական կոնֆերանսներ և այլ միջոցառումներ,

10) իրականացնում է նաև սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ համատեղ աջակցում է սովորողների ռազմադաշտային պարապմունքների (հավաքների) «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի օլիմպիադաների և ռազմամարզական խաղերի անցկացմանը,

2) պահեստազորի սպաներից ներկայացնում է զինղեկների թեկնածուներ,

3) «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

4) իրականացնում է զինղեկների վերապատրաստման աշխատանքները ռազմական գիտելիքների մասով,

5) ուսումնական հաստատությանը կցում է զորամաս, որը մշտապես աջակցում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կազմակերպմանը,

6) կազմակերպում է սովորողների այցելություններ զորամաս, բաց դռների օրեր, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մարտական պատրաստության գերազանցիկների հետ,

7) սովորողներին ծանոթացնում է ռազմական տեխնիկային, զինծառայողների կյանքին ու կենցաղին,

8) գործնական պարապմունքների անցկացման համար առանձնացնում է սպաների, ենթասպաների և սերժանտների, տրամադրում է հրաձգարաններ, զենք, փամփուշտներ և այլ անհրաժեշտ միջոցներ,

9) օգնություն է ցույց տալիս զինկոմիսարիատներին զինղեկների հետ ցուցադրական պարապմունքներ անցկացնելիս,

10) օժանդակում է ուսումնական հաստատությունների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝

1) մասնակցում է զինղեկների առաջին բուժօգնության հիմունքների ուսուցման գործընթացին,

2) ուսումնական հաստատություններում բժշկական գիտելիքների հիմունքների ուսուցման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

3) իրականացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պլանավորումը բժշկական գիտելիքների մասով:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայությունը՝

1) մասնակցում է զինղեկների վերապատրաստման աշխատանքներին՝ արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ուսուցման մասով,

2) ուսումնական հաստատություններում արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ուսուցման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

3) աջակցում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնատեխնիկական բազայի հարստացմանը,

4) իրականացնում է առարկայի պլանավորումը՝ արտակարգ իրավիճակների հիմնահարցերի մասով,

5) գործնական պարապմունքների անցկացման նպատակով ուսումնական հաստատություններին առաջարկում է քաղաքացիական պաշտպանության կառույցներ (ապաստարաններ, հակաճառագայթային թաքստոցներ) և անհատական պաշտպանական միջոցներ:

13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունը՝

1) մշակում և հրատարակում է մեթոդական ձեռնարկներ «Զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների», «Հասարակական կարգի պահպանման», «Քաղաքացիական պարտքի գիտակցման», «Ոստիկանություն-ուսումնական հաստատություն լիարժեք կապի ստեղծման» վերաբերյալ, օժանդակում է ուսումնական և նյութատեխնիկական բազայի հարստացմանը,

2) տանում է քարոզչական աշխատանքներ ոստիկանական ուսումնական հաստատություններ ընդունվելու հետ կապված թեկնածուներ ընտրելու համար,

3) պարբերաբար ուսումնական հաստատություններում անցկացնում է մեթոդական աշխատանքներ, հրահանգավորումներ, գործնական պարապմունքներ մանկավարժական կոլեկտիվի և սովորողների հետ՝ հասարակական կարգի պահպանման, քաղաքացիական պարտքի գիտակցման, արտակարգ իրավիճակներից խուսափելու համար համապատասխան թեմաներով,

4) ուսումնական տարին մեկ անգամ ուսումնական հաստատություններում ուսումնասիրում է զենքի պահման պայմանները և հատկացված զենքի ու ռազմամթերքի առկայությունը:

14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետո1ության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը՝

1) աջակցում է ուսումնական հաստատությունների՝ զորամասերի, սահմանապահ ուղեկալների հետ կապերի ամրապնդմանը, սովորողների և զինվորական ղեկավարների հետ ռազմադաշտային պարապմունքների (հավաքների) անցկացմանը,

2) զորամասերի հրամանատարների, կրթության ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ սովորողների համար կազմակերպում է մարտական փամփուշտներով հրաձգություն, ռազմահայրենասիրական խաղեր, մրցումներ, այլ միջոցառումներ,

3) կրթական ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ ուսումնական հաստատություններում ստեղծում է «Սահմանապահի պատանի ընկերներ» ռազմահայրենասիրական բնույթի ակումբներ և աջակցում ակումբների աշխատանքներին,

4) կազմակերպում է համատեղ խորհրդակցություններ շահագրգիռ նախարարությունների հետ պետական սահմանի պահպանման, քաղաքացիական պարտքի գիտակցման և այլ թեմաներով,

5) ուսումնական հաստատությունները կցում է ուղեկալի կամ զորամասի, որը մշտական օգնություն է ցույց տալիս «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում,

6) կազմակերպում է սովորողների այցելություններ ուղեկալ, սահմանապահ զորքերի ուսումնական կենտրոն, բաց դռների օրեր, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մարտական պատրաստության գերազանցիկների հետ,

7) սովորողներին ծանոթացնում է ռազմական տեխնիկային, զինվորական ծառայողների կյանքին ու կենցաղին,

8) պարապմունքների համար տրամադրում է հրաձգարաններ, ինքնաձիգ հրազեն, փամփուշտներ, այլ անհրաժեշտ միջոցներ,

9) սովորողների հետ գործնական պարապմունքներ անցկացնելու նպատակով առաջարկում է թեկնածություններ սպաների, ենթասպաների, սերժանտների կազմից,

10) օժանդակում է ուսումնական հաստատությունների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

III. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարները և Ստեփանակերտի քաղաքապետը, իրենց ենթակայության տակ հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ունեցող նախարարությունների և գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ոչ պետական նմանատիպ ուսումնական հաստատությունների հիմնադիրները՝

1) վերահսկողություն են սահմանում համաձայն ուսուցիչների և մանկավարժների ընտրության մրցութային սահմանված կարգի՝ հիմնական, ավագ, միջնակարգ ուսումնական հաստատություններում պարտադիր հիմունքներով զինվորական ղեկավարների ընտրության և նշանակման ընթացակարգի վրա,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժինների աշխատողների թվից նշանակում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման պատասխանատու աշխատողի (մասնագետի),

3) զինկոմիսարիատների, կցված զորամասերի և ուսումնական հաստատությունների տնօրենների հետ համատեղ մշակում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի միջոցառումների պլաններ, կազմակերպում այդ միջոցառումների նախապատրաստումը և անցկացումը:

16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների համակարգված կազմակերպման համար, զինղեկների կողմից ընտրվում է ավագ զինղեկ, որի մասին տեղեկացվում է տարածքային զինվորական կոմիսարը: Զինվորական կոմիսարը այդ մասին ի գիտություն է հայտնում տվյալ տարածքի բոլոր ուսումնական հաստատությունների տնօրեններին: Ավագ զինղեկը՝

1) պատասխանատու է ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման, ռազմահայրենասիրական դաստիարակության ու քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության աշխատանքների կազմակերպման համար,

2) իրականացնում է մշտական կապ տարածքային զինկոմիսարիատի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների և կցված զորամասերի հետ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների բարելավման նպատակով,

3) կազմակերպում է ուսումնական հաստատություններում ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների, նյութատեխնիկական բազայի տարրերի պահպանումն ու նպատակային օգտագործումը,

4) ղեկավարում է տարածքի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի մեթոդմիավորման աշխատանքները, կազմակերպում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի աշխատանքները տարածքում,

5) աջակցում է տարածքային զինվորական կոմիսարիատին անհրաժեշտ աշխատանքների կատարմանը (դիսպանսերիզացիա, կցագրում զորակոչ, զորահավաք, ռազմական ուսումնական հաստատությունների թեկնածուների ընտրություն, փաստաթղթերի պատրաստում),

6) նոր նշանակված զինվորական ղեկավարներին ուղարկում է ուսումնամեթոդական հավաքների և որակավորման դասընթացների,

7) պատրաստում և զինվորական կոմիսարիատ է ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր՝ զինղեկներին օրենքով սահմանված կարգով հերթական զինվորական կոչում շնորհելու համար,

8) ներկայացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ հաշվետվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) կրթության բաժիններին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

17. Ուսումնական հաստատության տնօրենը՝

1) պատասխանատվություն է կրում սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն»

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման համար,

2) ապահովում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրով նախատեսված տեսական և գործնական պարապմունքների անցկացման անհրաժեշտ պայմաններ և ուսումնանյութատեխնիկական բազա, անհրաժեշտ տարրերով,

3) զինղեկին ցույց է տալիս մեթոդամանկավարժական օգնություն իրականացնելու միջառարկայական կապերը,

4) վերահսկում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման դրվածքը, արդյունքները քննարկում է մանկավարժական խորհրդի նիստում,

5) ուսումնական հաստատության կողմից տրված հայտարարության հիման վրա, սահմանված ժամկետում պահեստազորի սպաներից ներկայացնում է բարձրագույն ռազմական կրթությամբ կամ բարձրագույն կրթությամբ և համապատասխան վերապատրաստում անցած թեկնածուների տվյալները: Ուսումնական հաստատության տնօրենը մրցույթ կազմակերպելու համար ստեղծում է հանձնաժողով, որի կազմում պարտադիր ընդգրկվում է տվյալ տարածքի ավագ զինղեկը: Մրցույթի անցկացման տեսական և գործնական առաջադրանքների հարցաշարը կազմում է ավագ զինղեկը: Ուսումնական հաստատության տնօրենը մրցույթում հաղթած թեկնածուին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում է ուսումնական հաստատության զինվորական ղեկավար՝ նրա հետ կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագիր:

18. Զինղեկը՝

1) անմիջականորեն ենթարկվում է ուսումնական հաստատության տնօրենին: Նա պատասխանատու է սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման, սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպման, ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների, նրանց փամփուշտների հաշվառման, պահպանման ու նպատակային օգտագործման, գործնական պարապմունքների անցկացման ընթացքում անվտանգության կանոնների պահպանման համար, համաձայն «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և նրանից բխող իրավական ակտերի,

2) անձամբ նախապատրաստում և անցկացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը, ղեկավարում է ռազմական գործն ուսումնասիրող խմբակների աշխատանքը,

3) տնօրինում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կաբինետը, զենքի պահպանման սենյակը, հրաձգային տիրը, «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնանյութատեխնիկական բազան,

4) հաշվառում և պահպանում է ուսումնական զենքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանց փամփուշտները՝ համաձայն «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և նրանից բխող այլ իրավական ակտերի պահանջների,

5) ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնում է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը,

6) սովորողներին մասնակից է դարձնում հրաձգության, ռազմակիրառական մարզաձևերի ու քաղաքացիական պաշտպանության համայնքային, շրջանային, հանրապետական մրցումներին,

7) առավելագույնս օգտագործում է գործնական պարապմունքներ անցկացնող ստանձնած զորամասերի, կազմակերպությունների հնարավորություններն ու օժանդակությունը՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի աշխատանքի որակը բարելավելու համար,

8) զինվորական կոմիսարիատների հետ համատեղ ուսումնական հաստատություններում կազմակերպում է բացատրական, քարոզչական աշխատանքներ՝ պատանիների ռազմական մասնագիտություն ընտրելու, ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստման համար, անհրաժեշտության դեպքում տնօրինության միջոցով ռազմական ուսումնական հաստատության դիմորդ-թեկնածուների համար քննական առարկաներից կազմակերպում է լրացուցիչ պարապմունքներ,

9) մշտապես բարձրացնում է իր մասնագիտական զինվորական և մանկավարժական կրթամակարդակը,

10) ուսումնական հաստատության դասղեկների (կուրսղեկների) հետ միասին կազմակերպում է նախազորակոչային տարիքի պատանիների զինվորական հաշվառման (կցագրման) համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը և, համագործակցելով զինվորական կոմիսարիատի հետ, ապահովում է նրանց ներկայությունը կցագրման տեղամասեր,

11) մասնակցում է զինվորական կոմիսարիատի կողմից կազմակերպվող ուսումնամեթոդական հավաքներին և մեթոդական պարապմունքներին, զորահավաքային աշխատանքներին, ուսումնական հաստատությանը կցված զորամասերի ուսումնական (ցուցադրական) զորավարժություններին:

19. Զինղեկի աշխատանքը կարգավորվում է դասացուցակով, միջոցառումների ծրագրերով, տնօրենի կողմից հաստատված անհատական պլանով:

20. Զինղեկը կարող է ներգրավվել ուսումնական հաստատության հերթապահությանը:

21. Զինղեկը վարչական և դասղեկական պարտականություններ չի կարող ստանձնել:

22. Զինղեկը՝ ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի հետ մեկտեղ չի կարող դասավանդել այլ ուսումնական հաստատությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում:

23. Զինղեկի կողմից դասավանդվող շաբաթական մինչև 11 ժամը համարվում է մեկ միավոր.

1) հանրակրթական (հիմնական, ավագ, միջնակարգ, վարժարան, կրթահամալիր) ուսումնական հաստատություններում սահմանվում է զինվորական ղեկավարի հաստիք և վարձատրվում է հանրակրթական ոլորտի համար հաստատված մանկավարժական դրույքաչափերով (մինչև 6 դասարան ունեցող ուսումնական հաստատությունների համար 0,5 միավոր, իսկ 6 և ավելի դասարան ունեցող ուսումնական հաստատությունների համար՝ մեկ միավոր),

2) քաղաքացիական պաշտպանության աշխատանքների համար զինվորական ղեկավարը վարձատրվում է ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի համար նախատեսված դրույքաչափերով, մինչև 6 դասարան ունեցող ուսումնական հաստատության համար՝ սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձի 0,3 միավոր, իսկ 6 և ավելի դասարան ունեցող ուսումնական հաստատության համար՝ սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձի 0,5 միավոր,

3) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սահմանվում է զինվորական ղեկավարի հաստիք և վարձատրվում է միջին մասնագիտական ոլորտի համար հաստատված դրույքաչափերով (մինչև 100 սովորող ունեցող ուսումնական հաստատության համար՝ 0,5 միավոր, 100 և ավելի սովորող ունեցող ուսումնական հաստատության համար՝ մեկ միավոր),

4) քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարման դիմաց վարձատրվում է ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի համար նախատեսված դրույքաչափերով մինչև 100 սովորող ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար՝ 0,3 միավոր, իսկ 100 և ավելի սովորող ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար՝ 0,5 միավոր:

24. Զինղեկը պարտավոր է աշխատանքի ընթացքում կրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից հաստատված նմուշի զինվորական համազգեստ, որը հատկացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջոցներով և հայտերով: Զինղեկն իրականացնում է ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը:

IV. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

25. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շաբաթական ժամաքանակն ըստ դասարանների և ուսումնական խմբերի սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տարեկան ուսումնական պլաններին համապատասխան: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան համարվում է ուսումնական պլանով նախատեսված պարտադիր առարկա:

26. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագիրը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ:

27. Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում մշակվում և հաստատվում է տարեկան պլան՝ ըստ շաբաթների:

28. Պարապմունքների անցկացման ժամանակ դասարանները (խմբերը) համարվում են դասակներ և բաժանվում են ջոկերի, որոնց հրամանատարները, զինղեկի ներկայացմամբ, նշանակվում են տնօրենի հրամանով:

29. Պարապմունքների ընթացքում ձեռք բերած գիտելիքների և ունակությունների ամրապնդման նպատակով, ռազմագիտության ամփոփիչ փուլում կցված զորամասի բազաներում անցկացվում են ծրագրով նախատեսված ռազմադաշտային պարապմունքներ (հավաքներ):

Պարապմունքների համար սահմանված ժամաքանակը կարող է երկարացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փրկարար ծառայության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից համատեղ սահմանված կարգով:

30. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան գնահատվում է կիսամյակային և տարեկան գնահատականներով՝ ընթացիկ գնահատականների հիման վրա:

31. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից սովորողները ազատվում են միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի սահմանած կարգով:

32. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի լրիվ դասընթացն ավարտած պատանիների ցուցակը՝ ամփոփիչ գնահատականներով, ուղարկվում է նրանց գրանցման վայրի զինկոմիսարիատ:

33. Ուսումնական հաստատություններում ռազմահայրենասիրական աշխատանքները կազմակերպվում և անցկացվում են ուսումնական և աշխատանքային պլաններին համապատասխան: Այդ աշխատանքներն իրականացվում են սովորողների մեջ բարոյականային հատկանիշներ, կարգապահության ու զինվորական ծառայության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, ինչպես նաև՝ հայրենիքին և նրա պաշտպանությանը նվիրվածություն դաստիարակելու նպատակով:

34. Նախազորակոչային պատրաստության արդյունքների և հսկողության անցկացման վերաբերյալ եզրակացությունը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնադրության ձև 4-ի:

V. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

35. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման համար նյութատեխնիկական բազան ապահովում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, այլ շահագրգիռ նախարարությունները և գերատեսչությունները, որոնց ենթակայության տակ գտնվում են ուսումնական հաստատությունները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ ուսումնական զենքով, ռազմամթերքով, փոքր տրամաչափի հրացաններով և նրանց փամփուշտներով՝ «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ բժշկական գիտելիքների ուսուցման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական պարագաներով,

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնական գույքով, պաշտպանական անհատական միջոցներով, ճառագայթային և քիմիական հետազոտության սարքերով:

36. Ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների և նրանց փամփուշտների ստացումը, հաշվառումը և պահպանումը կատարվում է «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով:

37. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի պահանջներին համապատասխան յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում ստեղծվում է ուսումնական նյութատեխնիկական բազա, որն անընդհատ կատարելագործվում և համալրվում է:

38. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի նյութատեխնիկական բազան ընդգրկում է՝

1) հատուկ կահավորված դասասենյակ, որն օգտագործվում է միայն «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման համար,

2) ուսումնական զենքն ու ռազմամթերքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանք պահելու համար կահավորված զենքի պահպանման սենյակը,

3) մարտավարության, շարային պատրաստության և քաղպաշտպանության պարապմունքների վայրերը,

4) ֆիզիկական կուլտուրայի, ուժային վարժությունների, պաշտպանամարզական միջոցառումների հրապարակները,

5) ժամապահի, օրապահի պարտականությունների գործնական պարապմունքների անցկացման կետերը,

6) ուսումնական զենքի մաքրման և յուղման, հրաձգության գործնական հնարքների կատարման մշակման տեղերը,

7) ուսումնադիտողական ձեռնարկները, ուսուցման տեխնիկական միջոցները, անհրաժեշտ այլ գույքը:

Հրաձգության տիրը և բժշկական գիտելիքների հիմունքների դասասենյակի առկայությունը ցանկալի է:

☞12

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11 ☜

VI. ՁԻՆՂԵԿՆԵՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

39. Ձինվորական ղեկավարների, «Նախնական զինվորական պատրաստությունե առարկայի ուսուցիչների վերապատրաստումը և ատեստացիան անց է կացվում «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն:

40. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցիչների և զինվորական ղեկավարների բժշկական գիտելիքների հիմունքների և արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության մասով որակավորման բարձրացումն իրականացնում է լիազոր պետական մարմինը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ:

41. Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհման, ինչպես նաև ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու կարգերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 920-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 225-Ն որոշման.

1) սահմանվում է ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած զինղեկին, ըստ մասնագիտական կրթության որակավորման աստիճանների, հավելավճար տալու պայմանները,

2) համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 225-Ն որոշմամբ սահմանված կարգի ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած զինղեկին ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին տրվում է հավելավճար՝

ա. չորրորդ աստիճանի որակավորման համար՝ մանկավարժական դրույքի 50 տոկոսի չափով.

բ. երրորդ աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 30 տոկոսի չափով.

գ. երկրորդ աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 20 տոկոսի չափով.

դ. առաջին աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 10 տոկոսի չափով,

3) ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած զինղեկի հասանելիք հավելավճարը տրվում է յուրաքանչյուր ամիս՝ աշխատավարձի հետ միասին,

4) սույն կարգով սահմանված հավելավճարները տրվում են միայն հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատող զինղեկներին:

42. Հանրակրթական ուսումնական հաստատության զինվորական ղեկավարի որակավորման առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ աստիճանների տարակարգերի բնութագրիչները և որակավորման առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 23-ի N 62-Ն հրամանի NN 1, 2, 3, 4 հավելվածներում:

VII. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

43. Ուսումնական հաստատության սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման որակի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների ստուգման նպատակն է՝

1) ուսումնասիրել «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենսդրական ակտերի, զինապարտության հարցերին առնչվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, իրենց ենթակայության տակ ուսումնական հաստատություններ ունեցող այլ նախարարությունների և գերատեսչությունների հրամանների, հրահանգների, շրջաբերական նամակների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրության պահանջների կատարումը,

2) ուսումնասիրել սովորողների նախնական զինվորական պատրաստություն առարկայի ուսուցման կազմակերպման վիճակը, ռազմահայրենասիրական և պաշտպանազանգվածային աշխատանքների կազմակերպման դրվածքը,

3) ստուգել սովորողների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի, ռազմակիրառական կարողությունների յուրացման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում ծառայելու պատանիների նախապատրաստվածության աստիճանը,

4) օգնություն ցույց տալ զորամասերին, զինկոմիսարիատներին, կրթության մարմիններին, ուսումնական հաստատություններին՝ պատանիների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության որակի և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

44. Սովորողների՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնասիրման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վերահսկողությունն իրականացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության և շահագրգիռ նախարարությունները՝ իրենց համապատասխան ստորաբաժանումների միջոցով:

45. Ստուգումները կարող են իրականացնել համալիր ձևով՝ ընդգրկելով «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության ամբողջ գործընթացը կամ մասնակի՝ առանձին հարցերի (թեմատիկ) ներառմամբ:

46. Ուսումնական հաստատությունները սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վերահսկողությունն իրականացնում են համաձայն իրենց պլանների և արդյունքները պարտադիր կարգով քննարկում մանկավարժական խորհրդի կամ խորհրդի նիստերում:

47. Հանրապետական և շրջանային (տարածքային) ստուգումներն իրականացվում են համապատասխան հանձնաժողովների կողմից: Հանձնաժողովի կազմը սահմանվում է ստուգումն իրականացնող մարմնի (մարմինների) հրամանով:

48. Ստուգող հանձնաժողովները նախապես հրահանգավորվում են:

49. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վերահսկողությունն անընդհատ գործընթաց է և ներառում է չորս փուլ՝

1) նախապատրաստական աշխատանք,

2) ստուգումներ և ուսումնասիրություն, աշխատանքի գնահատում և ամփոփում, հանձնարարականներ,

3) ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքներով սահմանված ձևի տեղեկանքների պատրաստում,

4) ընդունված որոշումների, արձակված հրամանների կատարման վերահսկողություն:

50. Ստուգումների արդյունքների հիման վրա կազմվող փաստաթղթերի (տեղեկանք) ցանկը և ձևերը տրվում են սույն կանոնադրության 1-3 ձևերում:

51. Ուսումնական հաստատությունները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ համալիր ստուգման են ենթարկվում երեք տարին մեկ անգամ: Առանձին հարցերի վերաբերյալ (թեմատիկ) ստուգումներ են կատարվում ըստ անհրաժեշտության: «ԱՆԲԱՎԱՐԱՐ» գնահատական ստացած ուսումնական հաստատությունները վերստուգվում են մեկ տարի անց:

52. Համալիր ստուգմանը հատկացվում է 3-5 օր, իսկ թեմատիկ ստուգմանը՝ 1-3 օր: Ստուգումների հարցաշարում նախատեսվում են՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ու «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի կատարման, զինղեկի մեթոդական պատրաստության ու նրա կողմից անցկացվող պարապմունքների որակի, ուսումնական, նյութատեխնիկական բազայի կատարելագործման, ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների և նախնական զինպատրաստության ղեկավարման դրվածքի հարցերը:

53. Ուսումնական հաստատությանը ընդհանուր գնահատական դրվում է սովորողների կողմից «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի յուրացման որակի, զինղեկի վարած պարապմունքների վերլուծության, ուսումնանյութական բազայի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վիճակի համար նշանակված գնահատականների հիման վրա: Հաշվի են առնվում նաև վիճակի համար նշանակված գնահատականների հիման վրա, հաշվի առնելով նաև սովորողների ֆիզիկական պատրաստությունը, նրանց կողմից բազմամարտի նորմաների հանձնման արդյունքները և ուժային վարժանքների կատարման կարողությունը:

54. Սովորողների կողմից ծրագրի յուրացման աստիճանը որոշվում է պարապմունքների ընթացքում նրանց ստացած գնահատականների հիման վրա: Ըստ այդ գնահատականների նշանակվում է ուսումնական հաստատության ընդհանուր գնահատականը.

1) «ԳԵՐԱԶԱՆՑ» է նշանակվում, եթե ստուգված սովորողների առնվազն 90 %-ը ստացել է դրական գնահատական, այդ թվում 55 %-ը՝ «ԳԵՐԱԶԱՆՑ»:

2) «ԼԱՎ» գնահատական նշանակվում է, եթե ստուգված սովորողների առնվազն 80 %-ը ստացել է դրական գնահատականներ, ընդ որում՝ առնվազն 55 %-ի «ԼԱՎ» և «ԳԵՐԱԶԱՆՑ», «ԲԱՎԱՐԱՐ» ստանալու դեպքում:

55. Ծրագրի յուրացման որակի ստուգման համար ուսումնական հաստատությանը գնահատական է նշանակվում, եթե ստուգվել է առնվազն 2 դասարան (խումբ): Գիտելիքների, ունակությունների և կարողությունների գնահատումը կատարվում է անցած թեմաների յուրացման ստուգմամբ:

56. Ձինղեկի անցկացրած պարապմունքների որակը ստուգվում է առնվազն 2 դասի անցկացման ընթացքում և գնահատվում է «ԳԵՐԱԶԱՆՑ», «ԼԱՎ», «ԲԱՎԱՐԱՐ» և «ԱՆԲԱՎԱՐԱՐ»: Դասը գնահատելիս հաշվի է առնվում դասի բովանդակության համապատասխանությունը ծրագրի պահանջներին, գաղափարական մակարդակն ու դասի դաստիարակչական նշանակությունը, դասավանդման մեթոդների ճիշտ ընտրությունը, նյութական ապահովվածությունն ու դասի ժամանակ դրա կիրառումը, սովորողների վարքը:

57. Ուսումնական հաստատությունում դասավանդման որակը գնահատվում է անցկացրած դասերի համար զինղեկի ստացած միջին գնահատականով:

58. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական նյութատեխնիկական բազայի վիճակը գնահատվում է.

1) «ԳԵՐԱԶԱՆՑ», եթե առկա են կանոնադրության համաձայն նախատեսված կահավորված սենյակները, վայրերը և կետերը, ինչպես նաև պահպանվում են կանոնադրության բոլոր պահանջները,

2) «ԼԱՎ», եթե առկա են «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատականի համար թվարկված նյութատեխնիկական բազայի բոլոր տարրերը, բացառությամբ հրաձգարանի,

3) «ԲԱՎԱՐԱՐ», եթե առկա են «ԼԱՎ» գնահատականի համար թվարկված բոլոր պայմանները, բացառությամբ ուսումնական հրապարակներից (տեղերից) որևէ մեկի,

4) «ԱՆԲԱՎԱՐԱՐ», եթե ուսումնական նյութատեխնիկական բազայի վիճակը չի համապատասխանում կանոնադրական պահանջներին կամ վարժական զենքն ու տեխնիկան պահպանվում են սահմանված պահանջների կոպիտ խախտումներով:

59. Ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքը գնահատվում է «ԲԱՎԱՐԱՐ» կամ «ԱՆԲԱՎԱՐԱՐ»: Այս դեպքում հաշվի է առնվում սովորողների առաջադիմությունը նախնական զինվորական պատրաստության դասընթացի, արտաուսումնական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բազմազան պաշտպանական խմբակների առկայությունն ու զորամասերի հետ համագործակցությունը:

60. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ընդհանուր վիճակը գնահատվում է.

1) «ԳԵՐԱԶԱՆՑ», եթե սովորողների գիտելիքները, զինղեկի անցկացրած պարապմունքների որակը, ուսումնական նյութատեխնիկական բազայի վիճակը գնահատվել են «ԳԵՐԱԶԱՆՑ», պատանիների ֆիզիկական պատրաստության վիճակը՝ «ԼԱՎ», իսկ ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքը՝ «ԲԱՎԱՐԱՐ»,

2) «ԼԱՎ», եթե «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատականի ցուցանիշները «ԼԱՎ» գնահատականից ցածր չեն, իսկ պատանիների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության վիճակը գնահատվել է առնվազն «ԲԱՎԱՐԱՐ»,

3) «ԱՆԲԱՎԱՐԱՐ», եթե վերը թվարկված «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատականի որևէ ցուցանիշ գնահատվել է «ԱՆԲԱՎԱՐԱՐ»:

61. Նախնական զինվորական պատրաստության թեմատիկ ստուգում անցկացնելիս ուսումնական հաստատությունը գնահատվում է միայն ստուգված հարցերի համար: Այս դեպքում ընդհանուր գնահատական չի նշանակվում:

62. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության հետ, ուսումնական հաստատություններում իրականացնում է ուսումնասիրություններ՝ նախազորակոչային պատրաստության մակարդակը պարզաբանելու համար: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարվում է վերլուծություն:

63. Ստուգումների արդյունքներով «ԱՆԲԱՎԱՐԱՐ» գնահատական ստացած զինղեկը պարտադիր, արտահերթ կարգով ատեստավորվում է:

64. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ստուգման տվյալներով հանրապետությունում, շրջաններում կազմվում են ստուգման արդյունքների տեղեկանքներ, որոնցից մեկական օրինակներ ուղարկվում են ստուգումներ իրականացնող պետական կառավարման կենտրոնական կամ տարածքային մարմիններ:

65. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ղեկավարումն իրականացնող բոլոր մակարդակների ղեկավար մարմինները կատարում են սովորողների նախնական զորակոչային պատրաստության աշխատանքի արդյունքների տարեկան վերլուծություն և ներկայացնում են ամփոփիչ ամենամյա հաշվետվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ենթահավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի օգոստոսի 16-ի N145/Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012թվականի օգոստոսի 18-ի N 246 - Ն «Հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագորխական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրությունը հաստատելու մասի» համատեղ հրամանով հաստատված կանոնադրության

Ձև 1

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

_____
ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը

Տնօրեն
_____
Անուն, ազգանուն, երբվանից է աշխատում այդ պաշտոնում

Զինղեկ
_____
Զինվորական կոչում, անուն, ազգանուն, ծննդյան թիվ

_____
կրթություն (ընդհանուր, զինվորական) մինչ պահեստ արձակվելը

_____
զբաղեցրած զինվորական պաշտոնը, երբվանից է զբաղեցնում

_____
զինվորական ղեկավարի պաշտոնը

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Նախնական զինվորական պատրաստությունը անցկացվում է _____ դասարաններում (խմբերում), ուսման մեջ ընդգրկված են _____սովորողներ, այդ թվում_____պատանիներ:

2. Վերջին 3 տարվա ընթացքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վիճակը ուսումնասիրվել է (ստուգվել է)

_____
ստուգող կազմակերպությունը, գտնվելու վայրը

_____
ստուգման ժամկետը, ստացած գնահատականը

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԸՆԹԱՑԻԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

1. Նախնական զինվորական պատրաստությունը ծրագիրը ստուգման օրը կատարվել է _____ %-ով, դասերին հաճախումը կազմում է _____ %:

2. Սովորողների կողմից ծրագրի յուրացման աստիճանը տնօրինությունը ստուգել է

_____
ժամկետը, ծրագրի բաժինը, դասարանը, ստուգված սովորողների թիվը, ստուգման գնահատականը

3.Տնօրենը ստուգել է զինղեկի անցկացրած _____ պարապմունքը և գնահատել է _____:

4. Ռազմադաշտային պարապմունքները և ինքնաձիգ զենքով հրաձգությունը մարտական փամփուշտներով անցկացվել են (պլանավորվել են)

_____
ժամկետը

_____
գտնվելու վայրը և մեթոդը

5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վիճակը քննարկվել է մանկավարժական խորհրդում _____

խորհրդակցության ժամանակաշրջանը

_____
արդյունքները

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԵՎ ԱՅԼ ՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնաձիգ_____հատ,
Փոքր տրամաչափի հրացան _____ հատ,
Ձեռքի նռնակ_____հատ,
Ինքնաձիգի ուսումնական փամփուշտներ_____հատ,
Հրամանատարական արկղիկ_____հատ,
Համազորային պաշտպանական հագուստ_____լրակազմ (կոմպլեկտ),
Ճառագայթային չափասարք_____հատ,
Քիմիական հետախուզման զորասարք_____հատ:
Պակասում են՝

_____
թվարկել

_____
նշել պատճառը

IV. ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

_____
անվանումը առկայությունը

ծանոթություն
_____

Նախնական զինվորական պատրաստության դասասենյակ
_____

Զենքի պահպանման սենյակ
_____

Հրաձգարան
_____մետր

Ուսումնական համալիր (վայր)՝
Մարտավարության_____

Քաղաքացիական պաշտպանության մարզահրապարակ_____

Շարային պատրաստության հրապարակ_____

Հրաձգության կանոնների և հնարքների կատարման հրապարակ _____

Գործնական պարապմունքի վայրեր_____

Օրապահի_____

Ժամապահի_____

Զենքի մաքրման և յուղման տեղ_____

Մարմնակրթության պատրաստության, ուժային վարժանքների հրապարակ, մարզադահլիճ _____

Մարտական փառքի սրահ (սենյակ) _____

Զենքի հափշտակման դեպքեր_____

երբ է կատարվել, քանակը

_____
տեսակը, պատճառը և հետախուզման արդյունքները

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական նյութատեխնիկական բազան գնահատվում է _____:

V. ՏՎՅԱԼՆԵՐ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ուսումնական հաստատությունում գործում են
_____

պաշտպանական խմբակներ_____
ինչ խմբակներ են գործում

2. Ավարտական դասարանների (խմբերի) պատանիներից բազմամարտի նորմերը հանձնել են _____:

3. Վերջին 3 տարում ռազմական ուսումնական հաստատություններ են դիմել _____ շրջանավարտ: Նրանցից ընդունվել են _____ մարդ:

4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պարապմունքներին մասնակցող սովորողներից իրավախախտումներ են թույլ տվել
_____
_____մարդ
_____
պատճառը, իրավախախտումը

VI . ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

_____
_____

Տ Ն Օ Ր Ե Ն
____ _____201_ թ. _____
ստորագրություն

Ձև 2

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

I . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

_____
ուսումնական հաստատության լրիվ անվանումը, գտնվելու վայրը

Տնօրեն _____
ազգանուն, անուն

Զինղեկ _____
ազգանուն, անուն

_____
պաշտոնավարման ժամանակաշրջանը, երբ է անցել ուսումնական հավաքներ,

_____
որակավորման դասընթացներ

1. Պլանավորումը _____
համապատասխանում է, չի համապատասխանում

_____
ծրագրի պահանջներին

Թերությունները _____:
թվարկել

2. Ծրագրի կատարումը, ստուգման օրը _____
_____%:
Ինչ հարցեր չեն ուսումնասիրվել և ինչու, պատճառները_____
_____:

3. Պարապմունքներին հաճախումների միջինը_____%,
ստուգման օրը՝_____%:
Չհաճախելու հիմնական պատճառներ _____
_____
_____:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է _____ ԱՅԴ ԹՎՈՒՄ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԹԵՄԱՆԵՐԻ)

Ծրագրի բաժիններ	Դասարան (խումբ)	Ստուգվել են, սովորողների թիվը	Գնահատականներ.				
			«գերազանց»	«լավ»	«բավարար»	«անբավարար»	Ընդհանուր գնահատական
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							
Ընդհանուր առուգվել է			Սովորող %	Սովորող %	Սովորող %	Սովորող %	

Սովորողները բավարար չափով չեն յուրացրել (ըստ ծրագրի նշել յուրաքանչյուր բաժնի հարցերը)

_____

III. ԲԱՋՄԱՄԱՐՏԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Ստուգվել է _____ սովորող: Նրանցից նորմաները հանձնել են _____%, այդ թվում՝ պտտաձողի վրա ձգում վարժությունից _____%, վազքից_____%,

Նռնակների նետումից_____%:

Թերությունները _____:

IV. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

1. Պարապմունքների թեման:
2. Դրական, առավել բնութագրական, ուշադրության և տարածման արժանի աշխատանքը

_____

թերությունները

_____

այդ թվում՝ դասի անհամապատասխանությունը

_____

դասի վատ կահավորվածությունը, նյութատեխնիկական բազան թերի

_____

օգտագործելը, դասի դաստիարակչական աշխատանքի բացակայությունը ընթացքում և այլն

V. ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՋԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

_____

1.Դրական աշխատանք_____

որն է արժանի ուշադրության և տարածման

_____

և առավել բնութագրական է

2. Պակասում է _____

թվարկել պակաս տարրերը, ամբողջական կառույցները և այլն

3.Թերությունները _____

բացակայում են, չեն համապատասխանում կանոնադրական պահանջներին

_____

թվարկել սարքավորումների թերությունները, նշել զենքերի վիճակը

_____

նշել թերությունների պատճառները

VI. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է_____

1. Աշխատանքային պլանի (համապատասխան բաժնի) առկայությունը _____

_____

կազմված է, թե՝ ոչ, թերությունները, դրական,

_____

ժամկետների պահպանումը, միջոցառումների ուղղվածությունը

2. Մարտական փառքի թանգարանների, սրահների, սենյակների առկայությունը և կահավորվածությունը _____

նշել՝ ծառայում են դրանք իրենց նպատակին, թե՝ ոչ,

_____

ինչ աշխատանքներ են կատարվում

Դիտողական, քարոզչական նյութերի առկայությունը_____

ձևավորումը _____

ինչ հարցեր են լուսաբանվում և չեն լուսաբանվում, դրանց

_____

բովանդակությունը, հրատապությունը և այլն

3. Գործնական կապերը զորամասերի հետ _____

_____

կապերի առկայությունը, համատեղ աշխատանքը

4. Կապը այն զորամասերի հետ, որոնցում ծառայում են շրջանավարտները _____

_____

նշել առկայությունը և ձևերը

5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ունեցող պատանիների կողմից իրավախախտումները _____

_____

եղել են, թե ոչ, պատճառները

VII. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ

1. Ուսումնական հաստատությունում արձակված հրամանները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ _____

_____

նշել բովանդակությունը, ժամկետը

2. Մանկավարժական խորհրդի աշխատանքը _____

որոշումները, արձանագրությունները

_____

կատարման ժամկետները և ընթացքը

3. Առարկայական մեթոդական հանձնաժողովի աշխատանքը _____

_____նշել

_____

առկայությունը և հակիրճ բովանդակությունը

4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման վերահսկողություն _____

դասարանների, ղեկավարների կողմից պարապմունքներին մասնակցելու,

_____

ստուգումներ կատարելու աշխատանքը, վերահսկողության արդյունքները:

5. Ռազմասպորտային տոնակատարության անցկացումը_____

_____

պլանավորումը

_____

նախապատրաստական աշխատանքը, արդյունավետությունը

Ընդհանուր գնահատականը _____

_____

Առաջարկություններ «Նախնական զինվորական պատրաստություն» աշխատանքի բարելավման վերաբերյալ _____

_____

_____

_____

ՍՏՈՒԳՈՂ **(ՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)**

_____

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

_____

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

_____

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

_____ _____20___ թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԻՍՈՒՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒՆԴ, ՔՈՒՅՐԻԿՍ

Տարիներ առաջ էր: Նոր էինք գյուղից տեղափոխվել քաղաք: Նստել էինք սեղանի շուրջը: Համերգ էինք տալիս մեր ծնողների համար Ուսուցչի օրվա առթիվ: Այն համընկել էր մայրիկի ծննդյան օրվան: Ներկայումս մշտապես հաշվվում է հոկտեմբերի 5-ը: Մեր ուսուցչական ընտանիքի համար տարիներ շարունակ այդ օրը կրկնակի տոն էր: Ես հաղորդավար էի, իսկ քույրերս՝ Նինելն ու Մարգարիտան (8 և 9 տարեկան), արտասանում էին իրենց ստեղծագործությունները: Ծնողներս լսում էին մեզ և ոգևորում իրենց ծափերով: Առաջին թղթակցությունս «Արտուտիկ» մարզային ռադիոհաղորդմանը տվեցինք և «Պիոներ կանչին»: Եթերում երեք քույրերով հանդես եկանք և մրցանակներ ստացանք (մանկական հեքիաթներ):

Երջանիկ օրեր, երջանիկ պահեր ու անվերադարձ թախիծ... Մանկության անհոգ երազներով լեցուն հուշեր... Ո՜ւր է թե հետ գային, նորից նստեինք սեղանի շուրջը ու լսեինք մորս՝ երջանկահիշատակ Թամարա Սարգսյանի խորհուրդները... Գոնե մխիթարվում ենք նրանով, որ հայրս՝ մեծագույն մանկավարժ Մ. Շահնազարյանն է կողքներիս իր խորհուրդներով: Եվ մեր հաջողությունները միշտ նվիրում ենք նրան ու մորս:

Պատկերացնո՞ւմ ես, մեր ներկա հնարավորությունները մեր մանկավարժական կյանքի սկզբում լինեին: Ափսոսում ես, բայց ինչ արած...

Եվ հիմա դու հոբելյար ես, լրանում է 50 գարունը քո:

Կարծես երեկ էր, երբ մենք չորս քույրերով սովորում էինք մայրաքաղաքի Ե. Չարենցի անվան հ. 7 միջնակարգ դպրոցում: Մայրիկս իմանալով, որ իր սիրելի ուսուցչուհի Ս. Խաչապետյանը դասավանդում է այդ դպրոցում, մեզ տարավ այնտեղ: Այնուհետև յուրաքանչյուրս ընտրեցինք մեր ուղին: Ես՝ կենսաբանություն և քիմիա, իսկ դու, որ միայն ֆիզկուլտուրայի պատճառով ոսկե մեդալի հավակնորդ չդարձար, ընտրեցիր ֆիզիկա առարկան: Ինչքա՜ն էր նեղացել ընկեր Խաչապետյանը, երբ քննական հանձնաժողովում ճանաչելով քո շարադրությունը, իմացել էր, որ ֆիզիկայի բաժնի դիմորդ ես: Առայսօր դու սիրում ես գրականությունը, ստեղծագործում ես, կազմակերպում գրական երեկոներ՝ նվիրված քո սիրած առարկային՝ ֆիզիկային: Հիշո՞ւմ ես առաջին ստեղծագործական երեկոն Ստեփանակերտի հ. 21 ՊՏՈՒ-ում: Մրցում էիր մայրիկի խմբի հետ: Մենք մեր մանկավարժական մկրտությունը ստացանք դժվար տարիներին: Դու մայրիկի հետ էիր մի կոլեկտիվում, ես հայրիկի հետ՝ Իվանյանում:

Արցախյան շարժման առաջին օրերին դու՝ քույրիկս, ցասումնալից նամակ հղեցիր «Կոմսոմոլսկայա պարվդա» թերթին՝ միամտաբար հավատալով, որ այն կտպեն թերթում, ու մարդիկ կիմանան, կճանաչեն, թե ով է թուրքը: Պատասխանեցին, թե եղբայրական ԽՍՀՄ-ում անհնար է պաշտպանել մեկին, դատապարտել մյուսին, որ բոլոր ազգերը միահավասար են:

Միամիտ օրենք, պատերազմը միանգամից ամեն ինչ դրեց իր տեղը:

Աշխատանքի անցար հ. 2 միջնակարգ դպրոցում: Մեր հանդիպումների ընթացքում ի՜նչ խանդավառությամբ ու գորովանքով ես խոսում ընկերներիդ, տնօրենության մասին: Անցած ուստարում կազմակերպեցիր «Ուրախ ֆիզիկա» ցերեկույթ, որի ընթացքում քո սաները ցուցաբերեցին իրենց գիտելիքները ֆիզիկայից: Միասին ստեղծագործեցիք, նորից բանաստեղծություններ գրեցիք: Քո մեջ արթնացավ մուսան, նա չէր էլ քնել, որովհետև միշտ էլ դժվար կամ ուրախ պահերին դու ստեղծագործում ես: Դա այդպես պետք է լինի, քանզի ֆիզիկան ու լիրիկան միշտ կողք կողքի են:

Դու հիմա հոբելյար ես, բայց մեզ համար նույն երկար ծամերով, ռոմանտիկ հայացքով, ժպտերես, հանգիստ, շատ դժվարությամբ վրդովվող մեղմաբարո, պրպտուն մտքով, քույրերիդ համար քաղցրիկ քույրիկն ես, հորդ հպարտությունը, ապագա երկու զինվորներիդ անուշիկ մայրիկն ես, զարմուհիներիդ համար խորհրդատու մորաքույրը, ամուսնուդ համար սիրող և համբերատար կողակիցը:

Մտովի զրուցեցի հետդ, չցանկացա խորանալ մանկավարժական գործունեությանդ մեջ, քանզի գիտեմ, որ դու միշտ նորն ընդունող ես և չես բավարարվում ձեռք բերածով:

Տարիների երազանքդ իրականություն է դառնում: Դպրոցում մտցվում են շախմատի դասընթացներ: Ուսանողական տարիներին միշտ մասնակցում էիր մրցույթներին: Հետո դա երկրորդ պլան մղվեց: Գուցե այս ժամանակաշրջանում մրցաշարերին նորից հաջողության հասնես կամ նոր շախմատիստներ պատրաստես:

Շնորհավոր ծնունդդ, եղիր երջանիկ, առողջ, միշտ շրջապատված բարեկամներով, հարազատներով և ընկերներով: Նորանոր հաջողություններ ու վերելքներ քեզ:

Քո քույր՝ Մարիետա Շահնազարյան
Իվանյանի միջնակարգ դպրոց

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Որտեղ ուսուցում կա, այնտեղ առկա է մեթոդիկան, ինչը սովորեցնում է ուսուցման ձևեր, մեթոդներ, եղանակներ, ուղիներ ու միջոցներ: Անշուշտ, այս ամենի ծեռք բերումը տրվում է ի վերուստ: Նախախնամությունը Աիդա Դավթյանին դասել էր արդեն այն մանկավարժների շարքը, ովքեր գի-

տությունների թագուհու ճշմարիտ արվեստը ճշմարիտ ուղով առաջնորդում են դեպի մատաղ սերնդի հոգու խորքերը, ինչու չէ նաև՝ ուսուցիչների: Ուսուցման ու դաստիարակության գաղտնիքների գիտակ, ուսուցչին բուժիչ դեղատոմս հրամցնող, ժամանակակից մանկավարժական մտածողության ջատագով Աիդա Դավթյանն իրականություն է դարձրել իր սրբազան երազանքը՝ նվիրվել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

Լրացել է բազմավաստակ մաթեմատիկայի ուսուցչուհի, Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի ուսումնական մասի գծով տնօրենի տեղակալ Աիդա Դավթյանի ծննդյան 50-ամյակը: Ծնվել է Հադրութի շրջանի Կարմրակուճ գյուղում: Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը: Տքնաջան մանկավարժական աշխատանքի շնորհիվ արժանացել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալի:

Նկատելի են տիկին Աիդայի եռանդուն քայլքը դասարանից դասարան, մաթեմատիկայի ճամփաբաժաններում աշակերտներին վստահելի ուղիներով առաջնորդելու ձիրքը, ուսուցիչներին (ոչ միայն մաթեմատիկայի) ժամանակի պահանջներին ու խնդիրներին ծանոթացնելու, դրանք կիրառելու գաղտնիքները:

Երեք տասնամյակ շարունակ սաների սեփականությունն է դարձնում Շիրակացու ուսմունքը, մոտ երկու տասնամյակ վերահսկում ուսումնական գործունեությունը դպրոցում, ուսուցիչներին մղում ստեղծագործական որոնումների՝ արդյունավետ դարձնելու ուսուցումը, կիրառելու մեթոդիկա, որն ապահովում է գործնականություն: Այսօր շնորհավորում ենք գիտելիքների շտեմարանի փակ դռները սաների առջև բացող, «հոգևոր ոսկի» մատուցող հոբելյարի 50-ամյակը, ցանկանում շքեղ ու հրեղեն լույսով ողողված ճանապարհ, ազնվական ձգտումների հավերժական հաղթանակներ:

Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Ո՛Չ՝ ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Անգլիացի իմաստասեր Ջոն Լոքը պնդում էր, որ երեխան ծնվում է որպես տաբուլառասա (անգրել, մաքուր տախտակ), և եթե նրանից հետագայում ինչպիսի մարդ կձևավորվի՝ կախված է շրջապատից:

Բազմիցս նշվել է ծխախոտի վնասակար ազդեցության մասին, այնինչ մեր ընտանիքների մեծ մասում ընտանիքի հայրը հանգիստ ծխում է հյուրասենյակում՝ օրինակ հանդիսանալով իր երեխաների համար: Հաստատված փաստ է, որ ծխողը վնասում է ոչ միայն իրեն, այլև շրջապատի մարդկանց: Այն մարդը, ով մեկ ժամ լինում է ծխած սենյակում, թունավորվում է նույնքան, որքան չորս գլանակ ծխածը: Ծխախոտի ծուխը պարունակում է շուրջ 4000 քիմիական միացություններ, որոնցից 40-ը օժտված են քաղցկեղածին հատկությամբ: Ծխախոտը բացասաբար է ազդում սրտանոթային համակարգի վրա, նպաստում սրտամկանի ինֆարկտի առաջացմանը: Ծխելը մեծացնում է նաև շաքարախտի զարգացման ռիսկը, թոքերում, ավշային հանգույցներում, և ներզատական գեղձերում կուտակված ռադիոակտիվ նյութերը նպաստում են տղամարդկանց սեռական անկարողության առաջացմանը, իսկ կանանց՝ անպտղաբերությանը:

Հասարակական այս չարիքի դեմ պայքարելու գործում, իհարկե, կարևոր դեր ունեն նաև դպրոցի ուսուցիչները, նախադպրոցական հիմնարկների դաստիարակները, սակայն ընտանիքն այն հիմնական օղակն է, որտեղ պետք է ձևավորվեն օգտակար, և մերժվեն վնասակար սովորությունները: Ծնողները պետք է միշտ հիշեն, որ վատ օրինակը շատ վարակիչ է, այն միշտ ավելի շուտ է ընդօրինակվում երեխայի կողմից:

Ներկայումս սպառնում է «ազգային չարիք» դառնալ մեր ազգին անհարիր մեկ այլ վնասակար սովորություն՝ ալկոհոլամոլությունը, և որքան էլ ցավալի է, այն տարածվում է մեր երիտասարդության շրջանում: Դրան նպաստող գործոններ են ալկոհոլային սովորություններն ընտանիքում, վատ հարաբերությունները ծնողների միջև, ծնողներից մեկի բացակայությունը, կուլտուրական ցածր մակարդակը, ազատ ժամանակի աննպատակ օգտագործումը, սքրեսային իրավիճակները և վերջապես՝ նորից վատ օրինակը:

Բացահայտված է, որ գողությունների 55%-ը, բռնությունների 69%-ը կատարվում է հարբած վիճակում: Խուլիգանական արարքների 80%-ը բաժին է ընկնում դեռահասներին: Հարբեցողության և ալկոհոլամոլության հետ է կապված մանկական հանցագործությունների 75%-ը: Այս թվերն ավելի քան խոսուն են ու վկայում են, որ ալկոհոլը սոցիալական չարիք է, որը ներսից քայքայում է մարդուն՝ հսկայական վնաս հասցնելով հասարակությանը: Ցավոք, ալկոհոլամոլությունը կարող է տանել դեպի թմրամոլություն ու թունանյութերի օգտագործում:

Այո՛, թող զարմանալի չթվա, վնասակար այս սովորույթը ևս սկսվում է ալկոհոլի ու ծխախոտի օգտագործումից: Թմրամիջոցների նկատմամբ հակումը չի զարգանում հանկարծակի, դա երկարատև շրջան է, և այստեղ նույնպես առաջին հերթին տուժում են երիտասարդները: Հետաքրքրությունը, հասակակիցների շրջանում նրանց նմանվելը, չկշռադատված արարքները հատկապես բնորոշ են պատանիներին: Այստեղ դարձյալ իրենց ծանրակշիռ դերն ունեն ծնողներն ու ուսուցիչները: Առողջությունը մարդու կյանքի գլխավոր նպատակն է, այն հնարավոր չէ գնել, այն պետք է երեխայի կյանքի առաջին իսկ օրերից պահպանել, պաշտպանել հիվանդություններից: Ավելորդ չեմ համարում մեջբերել Շոպենհաուերի խոսքերը. «Առողջությունը դեռ ամեն ինչ չէ, սակայն ամեն ինչը ոչինչ է, եթե չկա առողջություն»: Ինչպես նշում է ակադեմիկոս Յու.Պ. Լիսիցինը, առողջության առաջնահերթ պայմանը առողջ կենսակերպն է, որին բաժին է ընկնում բոլոր գործոնների շուրջ 50-59%-ը: Մարդու առողջության վրա էկոլոգիական գործոնների ազդեցությունը կազմում է 20-25%, կենսաբանականը (ժառանգականը)՝ 20%, արատներն ու թերությունները՝ 1%: Դժվար չէ տեսնել, որ մեր երեխաների առողջությունը մեր ձեռքերում է: Եկեք նպաստենք մեր երեխաների առողջության պահպանմանը, զերծ պահենք նրանց վնասակար սովորություններից: 21-րդ դարում մարդը բոլոր հիմքերն ունի ապրելու 120-160 տարի...

Կյանքի վաղ օրերից երեխայի մարզումը, գործառական հնարավորությունների ամրապնդումը, հնարավորություն կտան դաստիարակել կայուն նյարդային համակարգով, ֆիզիկապես ամուր, անբարենպաստ պայմաններին դիմակայելու պատրաստ անձնավորություն: Այս գործընթացում իրենց կարևոր դերակատարումն ունեն ընտանիքը, դպրոցը, հասարակությունը:

Սուսաննա ԱՂԱՍՅԱՆ
ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դոցենտ, կենս. գիտ. թեկնածու

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ

Հարգարժան Լարիսա Արմենակի

ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը ջերմորեն շնորհավորում է Ձեզ՝ 65-ամյա հոբելյանի առթիվ:

Լարիսա Սարգսյանն արդեն 42 տարի է՝ աշխատում է կրթության համակարգում՝ արժանվույնս անցնելով իր ճանապարհը կենսաբանության ուսուցչից մինչև Ստեփանակերտ քաղաքի ուսուցիչների արհմիության նախագահ, այնուհետև՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ, պետական տեսուչ: Դրանք տքնաջան աշխատանքի ոչ դյուրին, բայց արգասաբեր տարիներ են:

Մանկավարժական աշխատանքը նրա սիրած գործն է, կյանքի իմաստը: Լարիսա Սարգսյանի անձնային որակները, բնավորության պարզությունը նրա հետ շփվող յուրաքանչյուրի հարգանքն են հարուցում:

Շնորհավորելով Ձեզ, տիկին Սարգսյան, մաղթում ենք քաջառողջություն, իսկ Ձեր զավակներին ու թոռներին, որոնց նվիրել եք Ձեր կյանքը՝ երջանկություն և բարեկեցություն:

Շնորհակալություն՝ Ձեր աշխատանքի ու բարի սրտի համար:

ԼՂՀ ԿԳ նախարարության աշխատակազմն ի սրտե շնորհավորում է ԿՊՏ պետական տեսուչ, հայոց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ Գայանե Գրիգորյանին՝ ծննդյան 55-ամյակի կապակցությամբ:

Գայանե Գրիգորյանը աչքի է ընկնում որպես հաստատակամ և նպատակասլաց, պատասխանատվությամբ լի, ուղղամիտ, արդարամիտ և ճշմարիտ, անաչառ ու համեստ անձնավորություն:

Նրա խոսքը տարբերվում է ներքին ուժով, համոզվածությամբ: Ասմունքելու վարպետ է, մարդկային բոլոր լավագույն որակները կազմում են նրա հոգու հարստությունը: Նրանք, ովքեր ճանաչում են Գայանե Գրիգորյանին, բարձր են գնահատում նրա անձնային որակները և երախտապարտ են նրան՝ բազմամյա բարեխիղճ, անխոնջ աշխատանքի համար: Անմիջական է բոլորի հետ, պարզ է, անկեղծ, բարյացակամ, զինված մեծ համբերությամբ:

Գայանե Գրիգորյանը խորապես տիրապետում է իր մասնագիտությանը, գիտի հայ ժողովրդի ավանդույթները, մշակույթն ու կենցաղը: Միշտ շրջապատված է մայրենիի ուսուցիչներով, իր գործընկերներով և վայելում է նրանց սերն ու հարգանքը:

Մեր շատ սիրելի Գայանե՛, շնորհավորելով Ձեզ, ի խորոց սրտի ցանկանում ենք ընտանեկան երջանկություն, ստեղծագործական մեծ հաջողություններ: Թո՛ղ Աստված Ձեզ առողջություն, երկար տարիների կյանք պարգևի:

ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեկտիվն ի սրտե շնորհավորում է Մանվել Մխիթարյանին՝ ծննդյան 55-րդ տարեդարձի առթիվ:

Իր կյանքի 28 տարին Մանվել Մխիթարյանը նվիրել է մատաղ սերնդի դաստիարակությանը, ուսուցանել Հայաստանի և Արցախի պատմությունը:

Իր կոչումը նա որոշել է դեռ դպրոցական տարիներին՝ Ստեփանակերտի հ. 1 դպրոցում սովորելու ժամանակ: Նրա մանկավարժական գործունեությունը սկսվեց 1984թ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո: Ահա նրա անցած երկարատև ոչ դյուրին ճանապարհը. աշխատանք Ղարմետաքսկոմբինատում, Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ, նույն դպրոցի կազմակերպիչ (1986), ուսմասվար (1989), տնօրեն (1995): 1999-2007 թթ. ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հուշարձանների պահպանության և ուսումնասիրման բաժնի գլխավոր մասնագետն էր:

Արցախյան պատերազմի տարիներին Մ. Մխիթարյանը հող հայրենիի պաշտպանների շարքում էր: 2011թ. նա պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Վերջին տարիներին Մ. Մխիթարյանը ղեկավարում է կրթության պետական տեսչության բաժինը:

Կրթական հաստատությունների տեսչավորման, դպրոցի ղեկավարության և ուսուցիչների հետ աշխատանքի ընթացքում միշտ զգացվում է նրա բարեկրթությունը, մանկավարժական տակտը, պարզությունը շփման մեջ:



Վանա լիճ

Վերստին շնորհավորելով հոբելյարին՝ ցանկանում ենք նոր հաջողություններ անձնական կյանքում և աշխատանքում:

ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարություն

ՈՒՍՈՒՑՉԻ ԻՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

(Մասնագիտական-տեսական)

Ուսուցման գործընթացում բազմաթիվ արդիական խնդիրներ կարելի է հնչեցնել:

Իմ համոզմունքով արդիական հնչողություն պիտի ունենա նաև ուսուցչի ապրած կյանքը: Մենք գիտենք, որ մատաղ սերնդի համար կյանքի լավագույն դպրոց է հայոց մեծերի կյանքն ու գործունեությունը՝ սկսած սրբազնագույն Մաշտոցից: Նրանց կենսափորձն ու իմաստությունը, բազում խորհրդածությունները կրթության, գրականության, արվեստի զանազան բնագավառների մասին այսօր էլ գրավիչ իմաստություններ են և արդիական հնչողություն ունեն:

Բայց որքանո՞վ է ուսուցիչն իր իրական կերպարով՝ կյանքով ու գործունեությամբ, իր ապրելակերպով մասնակիցը դառնում գրողի կյանքի կամ գրական երկի վերլուծությանը:

Միշտ էլ փորձել եմ նմանության եզրեր գտնել տվյալ ժամանակաշրջանի,--- գրական ստեղծագործության մեջ տեղի ունեցած այս կամ այն դեպքի, գրողի կամ գրական հերոսի ապրած կյանքի միջև, համոզված, որ դասապրոցեսում դրանք դառնում են մարդկային լավագույն հատկությունների դաստիարակության գեղեցիկ օրինակներ:

Ամեն անգամ, երբ աշակերտներին խորհուրդ եմ տալիս, որ գեղեցիկ գրեն, հիշում եմ ամենայն հայոց բանաստեղծի իմաստուն միտքը, որ ձեռագիրն էլ բնավորություն է ձևավորում:

Բայց այսօր այդ ո՞ր մի ծնողը կվարեր Թումանյանի նման:

Երբ նա Վանից ստացել էր տղայի՝ Արտիկի նամակը, առանց կարդալու ետ էր ուղարկել՝ նամակի վրա գրելով. «Գրիր՝ ինչ ես գրել»:

Հետպատերազմյան շրջանի իմ մանկավարժական աշխատանքային գործունեության առաջին ուստարում, վերջին նստարանին նստած, 4-րդ դասարանի աշակերտուհի փոքրիկ Արմինեի պատկերն առայսօր իմ հիշողության մեջ է գամվել. որը ծանր հիվանդությունից հետո մահացավ: Այդ օրերին որքա՜ն սուր զգացի Չարենցի ապրած զգացողությունը, երբ 1919-1920թթ. որպես ուսուցիչ աշխատում էր Կարսի գյուղական դպրոցներից մեկում: Իր աչքի առջև անընդհատ սովից մահանում էին դպրոցի երեխաները: Նրանց դալուկ դեմքերն ամբողջ կյանքում չհեռացան բանաստեղծի մտապատկերից: Շատ լավ հասկանում էի, թե ամեն օր դասամատյանում աշակերտների անունները պակասելուց Չարենցն ինչպիսի սարսա---ելի լարված վիճակ էր ապրել:

Այդ ուսումնականում ամեն անգամ, մտնելով այդ դասարան, որքա~ն ծանր ապրումներ էի ունենում, երբ դասամատյանում՝ նրա անվան դիմաց, դատարկ վանդակներ էին տեսնում"

Երբ Գ.Մահարի եմ անցնում, որը Երևանի որբանոցներից մեկում դասավանդող Չարենցի սանն էր, ցավի զգացողությունը պատում է իմ հոգին, և ամեն անգամ ավելի լավ եմ ընկալում հորս ապրումները, երբ վաղ հասակից, ծնողներին կորցնելով, նրան քրոջ հետ տարան որբանոց: Իսկ երբ գաղթի ճանապարհին, պատմում եմ, որ Մահարին քրոջն էր կորցրել, փորձում եմ ամեն անգամ նմանության եզրեր գտնել գրողի և հորս չակատագրի միջև: Նա էլ էր քույր կորցրել, որին այդպես էլ չգտավ, քանի որ նրանց տարբեր որբանոցներում էին տեղավորել /տղաների և աղջիկների/: Որբանոցային դառը կյանքի մասին մանրամասնություններ այդպես էլ չպատմեց հայրս, բայց մի բան գիտեմ միայն, որ նա Հայաստանի տարբեր քաղաքների որբանոցներում էր եղել: Իրենից մեկուկես տասնամյակ առաջ այդ որբանոցներում ապրած Գ.Մահարին հետագայում իր «Ինքնակենսագրականի» մեջ պիտի գրեր, «1915թ. ես

ՇՈՒՇԻԻ ԿԻՐՃՈՒՄ

Ճիշտ է, ես 9-րդ դասարանից դուրս եմ եկել Բերձորի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցից և ուսումս շարունակում եմ Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի քոլեջի դիզայնի բաժնում, սակայն մտովի միշտ իմ դասարանի հետ եմ, իսկ Բերձոր գալուս դեպքում այցելում եմ դպրոց, մասնակցում դասերին: Վերջերս մեր դասարանցիները որոշել էին այցելել մեր երկրի որևէ գեղատեսիլ կամ պատմական վայր: Հայրս, որ լավ է ճանաչում Քաշաթաղի և Շուշիի շրջանները, առաջարկեց մեկօրյա հանգիստն անցկացնել Շուշիի կիրճում՝ Հունոտի ձորում, որտեղ պահպանվել են հնամենի տներ, կամուրջներ: Մեր դասղեկի և առաջին ուսուցչի հետ Սայաթ քեռու մեքենայով դուրս եկանք Բերձորից և հասանք Մխիթարաշեն կոչվող գյուղը: Այստեղից ճանապարհը պետք է շարունակեինք ոտքով: Նախորդ գիշեր տեղացած անձրևից ճանապարհը ցեխապատ էր, բայց եղանակը բարենպաստ էր: Մեզ դեպի Հունոտի ձոր ուղեկցեց Մխիթարաշենից Սևակ անունով մի երիտասարդ: Ընտրեցինք մի բացատ, որտեղ պետք է հանգստանայինք: Սակայն շտապում էինք որպե առաջ տեսնել Հունոտի ձորի հրաշքներից մեկը՝ հավերժ կանաչ քարանձավը, որի վրայով ջրվեժ է իջնում: Մի արահետով շարժվեցինք առաջ: Ճանապարհի մի մասն անանցանելի էր, և ստիպված անցնում էինք Կարկառ գետի միջով: Վերջապես հասանք տեղ. երկու գերան գետի ափերը կապում էին իրար: Մտնում ենք քարանձավ: Դարերի ընթացքում բնությունը գեղատեսիլ ու հետաքրքիր քանդակներ է արել քարանձավի առաստաղին ու պատերին: Ներսում էլ կարծես անձրև էր մաղում, իսկ քարանձավի մուտքը պատված է ջրե վարագույրով: Երկար ժամանակ ուսումնասիրում էինք քարանձավը, տարածքը, լողացանք գետում և վերադարձանք հիանալի տպավորությամբ: Իր վեհությամբ ու գեղեցկությամբ ավելի հմայիչ էին կիրճի ուղղաձիգ, բարձրաբերձ ժայռապատերը, որոնք նաև արծվաբներ են: Գետի ձախակողմյան ժայռապատից չնայած բարակ, բայց գեղեցիկ ջրվեժ է իջնում, իսկ քիչ ներքև միջնադարյան բերդապարսպի երկու բուրգ առավել գեղեցիկ ու տպավորիչ են դարձնում տեսադաշտը: Այստեղ նաև քարե կամարակապ կամուրջ կա, որտեղով ժամանակին Վարանդայի զինվորներն ու բնակիչները դեպի բերդ են բարձրացել: Մի պահ պատկերացնում եմ, թե ինչպես էին 1992 թվականի մայիսի 8-ին հայոց քաջերը բարձրանում ժայռն ի վեր և մեր պատմական հայրենիքից դուրս քշում թշնամուն: Հայրս ասում է, որ նաև այլ ուղղությամբ էին գրոհում հայոց քաջերը: Օրը մոտենում է ավարտին. դուրս ենք գալիս Շուշիի կիրճից՝ տպավորված գեղատեսիլ բնությանբ ու մեր պապերի կառուցած կամրջով, քարե տանիքներով շինություններով: Բայց մեր էքսկուրսիան շարունակվում է: Հաջորդ կանգառը Շուշի քաղաքի Ջըդըրդուզ կոչվող տարածքն էր: Հազարավոր սպիտակ ծաղիկները, հիմնականում երիցուկներ, չքնաղ տեսարան էին ստեղծել, իսկ վերևից արդեն այլ կերպ էր դիտվում կիրճը: Սպիտակ ծաղիկներից ծաղկեպսակներ ենք հյուսում, լուսանկարվում: Մայրամուտին Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու գմբեթը